ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ԽԱՉԱԿՆՔՈՒՄ

ԵՐԵՒԱՆ - 2024

Օտար աղբիւրներից մէջբերումներ անելիս դրանք գրքում ներկայացրել եմ հայերէն թարգմանութեամբ:

«Ինչո՞ւ ենք խաչակնքում»

Հեղինակային իրաւունք © 2024 Գէորգ սրկ. Գէորգեան
Բոլոր իրաւունքները պաշտպանուած են:

ISBN: 8-89238-945-7
ISBN 13: 979-8-89238-945-7

Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում:



Սոյն գրքոյկը հրատարակւում է ազնիւ մեկենասութեամբ

Պէզիրկէնեան ընտանիքի՝

Ի յիշատակ իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հօր՝

ՀԱՄԲՕ ՊԷԶԻՐԿԷՆԵԱՆԻ

«Պատկերի՛ր Խաչը նախ մտքիդ եւ հոգուդ վրայ,
քանի որ երբ Խաչը մեզ հետ է,
ապա դեւերը սարսափելի ու վտանգաւոր չեն,
իսկ մահը մահ չէ, այլ՝ քուն:
Խաչով բոլոր թշնամիները պարտուած են:
Այդ պատճառով Խաչը մեր պարծանքն է,
բոլոր բարիքների սկիզբը,
մեր համարձակութիւնն ու զարդարանքը»:

Սբ. Յովհան Ոսկեբերան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սրտի խօսք / 7

Մուտք / 9

Արդեօք Աստուածաշնչում ոչինչ գրուած չէ խաչակնքման մասին / 11

Խաչակնքումը՝ որպէս առաքելական դաւանանքի խոստովանութեան հակիրճ աղօթք / 18

«Փառաւորեցէք Աստծուն ձեր մարմիններում» / 22

Խաչակնքումը՝ որպէս մկրտութեան յիշեցում եւ վերահաստատում / 29

Խաչակնքումը՝ որպէս Յիսուս Քրիստոսի չարչարանքների հետ մեր խաչակրութեան խորհրդանիշ / 32

Խաչակնքումը՝ որպէս հզօր զէնք ու վահան ընդդէմ սատանայական ազդեցութիւնների / 43

Խաչակնքումն ու Աստծու Գառնուկի Արիւնը / 49

Խաչակնքուելով մարդկանց առջեւ՝ Քրիստոսին ենք դաւանում / 53

Խաչի ու խաչակնքման բեւեռների իմաստը / 61

Խաչակնքման երեք բարիքները՝ իմաստութիւն, զօրութիւն եւ անմահութիւն / 64

Պատասխան աղանդաւորների առարկութիւններին / 65

Պատմական վկայութիւններ խաչակնքման զօրութեան մասին / 69

Ինչո՞ւ են հայերը խաչակնքուելիս սկզբում ձեռքը տանում ձախ, յետոյ՝ աջ ուսի կողմը, իսկ Ուղղափառ եկեղեցու հետեւորդները՝ հակառակը / 83

Ինչպէ՞ս ճիշդ խաչակնքուել / 85

ՍՐՏԻ ԽՕՍՔ

Խաչը խորհրդանիշն է Աստուծոյ հետ մեր կապին: Խաչին խորհուրդին հետ հաղորդակցիլ՝ կը նշանակէ հանդիպում մը ունենալ Քրիստոսի հետ: Եւ որքա՛ն կարեւոր է այդ խորհուրդը բացայայտել ու մեր սրտին մէջ կրել մշտապէս:

Սոյն աշխատասիրութիւնը՝ «Ինչո՞ւ ենք խաչակնքում», սիրով յանձն առաւ պատրաստել բարեշնորհ Գէորգ Սարկաւագ Գէորգեանը, եւ մեր սպասումն է, որ հայ եկեղեցւոյ իւրաքանչիւր սպասաւոր ու հաւատաւոր զաւակ այն վերընթերցէ եւ միաժամանակ իրազեկ դառնայ Սուրբ Խաչի եւ խաչակնքումի սրբացնող խորհուրդին, Սուրբ Հայրերի մեկնութիւններուն, Սուրբ Խաչի բազմազան դրսեւորումներուն եւ վկայութիւններուն, որով անտարակոյս կը հարստանան մեր հոգեւոր գիտելիքները, մեծապէս կը լուսաւորուի մեր միտքն ու հոգին:

Այս պահուն կ'ուզենք ըսել, որ Խաչը Աստուծոյ լոյսն է մեր կեանքի մէջ: Խաչին խորհուրդով ապրիլ՝ կը նշանակէ Աստուծոյ հետ ապրիլ, լոյսի ճանապարհէն քայլել, լուսաւորել մարդկանց կեանքը: Խաչի խորհուրդով ապրուած անհատին կեանքը լուսաւոր է, ընտանեկան կեանքը հզօր է, ազգի կեանքը յաւէրժական է:

Արդարեւ, Գէորգ Սարկաւագը մեզ կը հրամցնէ «առաքելական դաւանանքի խոստովանութեան»՝ խաչակնքումի հոգեւոր ծալքերը, աստուածաբանական մեկնումները, որոնցով լուսաւորուած՝ աղօթելիս խաչակնքելով մշտապէս մեր հայեացքն ուղղենք առ Աստուած՝ «յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Սիրելի՛ Հաւատաւոր զաւակներ, ճաշակեցէ՛ք այստեղ ի մի բերուած հիւթեղ պատգամներն ու մեկնաբանութիւնները, եւ լուսաւորեցէ՛ք Ձեր հոգին Սուրբ Խաչի յաւէրժական խորհուրդով:

Տ. Յովսան Արք. Տէրտէրեան



Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի
Դեկտեմբեր 11, 2023

ՄՈՒՏՔ

«Օրհնեալ է Տէր Աստուածն իմ, որ ձեռքս վարժեցրեց պատերազմի եւ մատներս՝ ճակատամարտի» (Սաղմոս 143, 1):

Խաչակնքումը ոչ թէ պարզապէս բարեպաշտական շարժուձեւ է, այլեւ հզօր եւ յաղթական աղօթք: Ամէն անգամ, երբ խաչակնքւում ենք, կարծես անտեսանելի, գերզգայական տեսիլքով մօտենում ենք Տէր Յիսուսի մարմնին, եւ Նրան մօտենալով՝ անմիջապէս գիտակցաբար մտովի երկինք ենք բարձրանում: Եթէ մենք գիտակցենք խաչակնքուելու խորհրդաւոր իմաստն ու նշանակութիւնը, ապա կարող ենք է՛լ աւելի խորացնել մեր հաւատքը եւ զգալ Աստծու շնորհական ու փրկաբեր բազմատեսակ օրհնութիւնները:

Առաքելական դարից մինչ օրս քրիստոնեաները, հիմնուելով սրբազան Աւանդութեան վրայ, աղօթելիս սովորութիւն ունեն կատարելու խորհրդանշական իմաստ ունեցող գործողութիւններ, որոնցից մէկն էլ խաչակնքումն է: Այն քրիստոնէական աստուածապաշտութեան ծիսական արտայայտչաձեւ է: Խաչակնքումը հոգեւոր-բարեպաշտական ամենատարածուած եւ ամենախորիմաստ սովորութիւններից է, որը յատկանշում է քրիստոնեայի ինքնութիւնը: Խաչակնքումը քրիստոնէական հաւատքը խոստովանելու ամենաարտայայտիչ ու հակիրճ ձեւն է, որ գոյութիւն ունէր դեռեւս քրիստոնէական վաղ ժամանակաշրջանից: Դրա կարեւորութեանը լայնօրէն անդրադառնում են առաջին դարերի սրբակեաց Հայրերը, մանաւանդ Տէրտուղիանոսը (150-220 թթ.), ով դեռեւս 3-րդ դարում յստակ խօսում էր խաչակնքուելու նշանակութեան մասին եւ հրահանգում, որ հաւատացեալները խաչակնքուեն. «Ամէն ընթացքի մուտքի եւ ելքի ժամանակ, հանուելիս, ուտելիս, մոմ վառելիս, քնի պատրաստուելիս ու տարբեր զբաղմունքներից առաջ մեր դէմքերին

Խաչի նշանը պատկերելով՝ միշտ պաշտպանուել ենք չարի հնարքներից»[1]: Քրիստոնեան խաչակնքւում է Եկեղեցի մտնելիս եւ դուրս գալիս, Սուրբ Պատարագի եւ ժամերգութիւնների ընթացքում, սրբութիւններին մօտենալիս, որեւէ աշխատանք սկսելիս, ուտելուց առաջ եւ յետոյ, նեղութեան, կարիքի, հիւանդութեան, վտանգի պահերին եւ այլն...

Խաչակնքումը նոր իմաստ է հաղորդում մեր կեանքին: Խաչակնքուելով նախ եւ առաջ քրիստոնեան խոստովանում է Տէր Յիսուս Քրիստոսի մահը Խաչի վրայ մարդկութեան ազատագրման համար՝ խնդրելով Աստծու օգնութիւնն ու ողորմութիւնը. երկրորդ՝ նա խոստովանում է առաքելական հաւատքի դաւանանքը. երրորդ՝ յիշում է իր կոչումը՝ հետեւելու Տէր Յիսուսին, Քրիստոսի անուան եւ իր հաւատքի համար համբերելու վշտերին ու դժուարութիւններին. չորրորդ՝ զօրանում է Քրիստոսի Խաչի զօրութեամբ՝ պայքարելու իր եւ աշխարհի չարիքի դէմ. հինգերորդ՝ յիշում եւ վերահաստատում է իր Մկրտութիւնը. վեցերորդ՝ խոստովանում է, որ սպասում է իր Տիրոջ փառքի յայտնութեանը՝ Քրիստոսի Երկրորդ Գալստեանը, որին, ըստ աստուածային խօսքի, նախորդում է Մարդու Որդու նշանի յայտնուելը երկնքում: Խաչակնքումը նաեւ զօրէղ զէնք է՝ ընդդէմ սատանայական ազդեցութիւնների, անձնական մեղքերի, պիղծ ցանկութիւնների եւ եսասիրութեան:

Սիրելի՛ ընթերցող, կիրառելով գրքում ներկայացուած տեսակէտները ձեր կեանքում, դուք կարող էք հիմա ձեր սրտում հաստատել խաչակնքման մասին ճշմարտութիւնները՝ ամէն անգամ յիշելով ու կիրառելով այդ տեսակէտներից որեւէ մէկը: Այս ամէնը յիշելով ձեր աղօթքների ժամանակ՝ կը տեսնէք, թէ ինչպէս է աստուածային շնորհը խաչակնքման միջոցով առատապէս հոսում ձեր կեանքի ներկայ եւ գալիք օրերին:

Արդ, տեսնենք, թէ ո՛րն է խաչակնքելու հոգեւոր իմաստն ու նշանակութիւնը:

Գէորգ Սրկ. Գէորգեան

1 https://www.goodcatholic.com/five-things-you-should-know-about-the-sign-of-the-cross/ (առ 1/10/2023):

Արդեո՞ք Աստուածաշնչում ոչինչ գրուած չէ խաչակնքման մասին

*Մի շարք բողոքական քարոզիչներ խստօրէն մերժում եւ պայքար են մղում խաչակնքման դէմ՝ պատճառաբանելով, թէ այդ մասին Աստուածաշնչում ոչինչ գրուած չէ։ Խաչակնքման դէմ հակաճառողներն ասում են, թէ խաչակնքումը սուրբգրային չէ, քանի որ Նոր կտակարանում խաչակնքման որեւէ պատուէր կամ հրահանգ չկայ։ Նաեւ պնդում են, թէ խաչակնքումը տանում է կռապաշտութեան ու ձեւամոլութեան։ Սովորաբար նրանք մէջբերում են Գործք Առաքելոցի հետեւեալ համարը. «**Նա... ոչ էլ մարդկանց ձեռքերով է պաշտում**» (Գործք 17, 25)։*

*Եթէ Աստուած մարդկանց ձեռքերով չի պաշտում, ուրեմն կարելի է ասել նաեւ, թէ մարդկանց ձեռքերով գրուած Աստուածաշունչն էլ պէտք չէ։ Վերոյիշեալ համարում առաքեալը չի խօսում խաչակնքման մասին, որը հեթանոս աթէնացիները (Գործք 17,16) չէին անում եւ չգիտէին, այլ բացայայտում է նրանց մոլորութիւնը՝ որպէս կռապաշտներ, ովքեր կարծում էին, թէ Աստծուն, ինչպէս եւ մարդուն, պէտք է ուտելիք, դրա համար զոհաբերութիւն էին մատուցում իրենց կուռքերին (տե՛ս Դան. 14, 3-23)։ Առաքեալը պնդում է, որ Աստուած, Տէրն է երկնքի եւ երկրի «**որ ստեղծեց այս աշխարհը եւ այն ամէնը, որ նրա մէջ կայ**» (Գործք 17, 24)։ Ինքն է, որ կեանք, շունչ եւ ամէն ինչ տալիս է ամէն ինչին եւ ոչնչի կարիք չունի ու, հետեւաբար, չի պահանջում մարդկային ձեռքերի այն ծառայութիւնը, որոնք նախատեսուած են Աստծու «կարիքները» բաւարարելու համար։ Խաչակնքուելով մենք չենք մտածում Աստծու «կարիքը» բաւարարելու մասին,*

*քանի որ հաւատում ենք, որ Նա է միակ Հզօրը, թագաւորների Թագաւորը եւ տէրերի Տէրը (Ա. Տիմ. 6, 15)։ Մենք ինքներս Աստծու ողորմութեան կարիքն ունենք, որը խնդրում ենք յանուն Խաչի զոհաբերութեան։ Խաչակնքուելով մենք խոստովանում ենք մեր հաւատքը Քաւիչի նկատմամբ։ Մենք խաչակնքւում ենք ո՛չ թէ Աստծու, այլ մեզ համար։ Իսկ եթէ աղօթելու ժամանակ հաւատացեալը չի կարող գործածել իր ձեռքերը, ապա ինչո՞ւ է Պօղոս առաքեալն ասում. «**Ուզում եմ, որ տղամարդիկ աղօթեն ամէն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դէպի վեր, առանց բարկութեան եւ երկմտութեան**» (Ա. Տիմ. 2, 8)։ Դարձեալ՝ «**Մարդիկ, իրենց սրտի ցաւը գիտենալով, ձեռքերը տարածեն դէպի այս տունը**» (Գ. Թագ. 8, 38)։ Երանելի Դաւիթն ասում է. «**Լսի՛ր, Տէ՛ր, պաղատանքիս ձայնը, երբ ես աղաչեմ քեզ, երբ ձեռքերս դէպի սուրբ տաճարդ պարզեմ**» (Սաղմ. 27, 2)։*

*Առաքեալի խօսքը (Գործք 17, 25) պէտք է ամբողջական կարդալ. «**Նա ձեռակերտ տաճարներում չի բնակւում, ոչ էլ մարդկանց ձեռքերով է պաշտւում, որպէս թէ մի բանի կարօտ լինէր։ Նա՛ է տալիս ամէն բանի կեանք եւ շունչ եւ ամէն ինչ**» (Գործք 17, 25)։ Նոյն խօսքերն ասում էր Սողոմոնը, երբ կառուցեց տաճարը։ Եւ Աստուած էլ նոյնն էր ասում (տե՛ս Սաղմ. 49)։ Սակայն սաղմոսի մէջ էլ Աստուած զոհաբերութեան պատարագ էր պահանջում, ու Սողոմոնն այն կատարում էր, որովհետեւ Աստուած դա է ցանկանում. ո՛չ «որպէս թէ մի բանի կարօտ լինէր», այլ որպէսզի մենք վարժուենք հաւատի, բարոյականութեան եւ աստուածահաճութեան մէջ։*

Եկեղեցին պահպանել է խաչակնքուելու սովորութեան այս ըմբռնումը, քանի որ քրիստոնեաներն ապրում էին՝ համաձայն առաքեալներից ժառանգած աւանդութիւնների։ Այսպէս, Սուրբ Բարսեղ Մեծն ուսուցանել է, որ Խաչի նշանը առաքեալների կողմից ծագած աւանդոյթ է, «որոնք մեզ

սովորեցրել են խաչի նշանով տեառնագրել նրանց, ովքեր իրենց յոյսը դրել են Տիրոջ անուան վրայ»[1]: Նաեւ գրում է. «Եկեղեցու հաւատալիքներից եւ քարոզներից մենք որոշ բաներ ունենք Սուրբ Գրքի ուսմունքից, իսկ միւսները մեզ են հասել առաքելական աւանդութիւններից, որոնք ստացել ենք գաղտնի: Բայց երկուսն էլ ունեն բարեպաշտութեան նոյն ուժը: Եւ ոչ ոք չի վիճարկում վերջինիս, եթէ նա գոնէ ինչ-որ չափով ծանօթ է եկեղեցական հրահանգներին: Որովհետեւ եթէ մենք մերժէինք Ս. Գրքում չգրուած այն աւանդութիւնները, որոնք չունեն մեծ զօրութիւն, ապա մեզ համար աննկատ կերպով կը խեղաթիւրէինք Աւետարանի ամենակարեւորը, աւելի ճիշդ՝ քարոզը մենք կը վերածէինք դատարկ անուան: Օրինակ՝ ո՞վ է գրաւոր սովորեցրել նրանց, ովքեր իրենց վստահութիւնը դրել են մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան վրայ, իրենց վրայ տեառնագրել խաչի նշանը»[2]:

Պօղոս առաքեալը սովորեցնում է, թէ **«տառն սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում»** (Բ. Կորնթ. 3, 6): Հետեւաբար, չի կարելի կուրօրէն կառչել տառից եւ ասել. «Այս բանը պէտք է անել, քանի որ գրուած է, եւ այս բանը պէտք չէ անել, քանի որ գրուած չէ»: Շատ բաներ կան, որ մարդիկ անում են, սակայն Աստուածաշնչում գրուած չէ: Օրինակ՝ ամէնից ծայրայեղ բողոքական հոսանքներն անգամ, որոնք չեն խաչակնքւում, իրենց ժողովատեղիներում մեծ խաչեր են կանգնեցնում: Արդեո՞ք Նոր կտակարանը տալիս է պատուէր կամ հրահանգ՝ ժողովատեղիներում խաչ դնելու: Նոյնիսկ բողոքականութեան հիմնադիր Մարտին Լիւթերի մօտեցումն այլ էր խաչակնքման վերաբերեալ: Հասկանալով խաչակնքուելու մեծագոյն օգուտը ժողովրդի հաւատքի ու նուիրուածութեան

1 https://www.byzimom.com/post/lesson-1-the-sign-of-the-cros (առ 11/11/2023):

2 http://orthlib.narod.ru/Basil/amfiloh27.html (առ 12/11/2023):

համար՝ նա եւ իր հետ այլ «բարեփոխիչներ» պահպանեցին խաչակնքուելու օգտագործումը։ Փաստօրէն, Լիւթերը յորդորում էր խաչակնքուելը եւ իր՝ «Փոքր քրիստոնէական» գրքում նաեւ հետեւեալն էր յորդորում. «Սուրբ նշանը Եկեղեցում օգտագործուել է առաքելական ժամանակներից մինչեւ մեր օրերը... Առաւօտեան, երբ անկողնուց արթնանում ես, դու պէտք է քեզ օրհնես Սուրբ Խաչով (խաչակնքուես) եւ ասես. «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»»[1]։

Ըստ բողոքական աստուածաբանների՝ խաչակնքուելու սովորութիւնը լայնօրէն տարածուած էր բողոքականութեան սկզբնական դարաշրջանում, իսկ յետոյ դուրս է մղուել ոչ թէ այն պատճառով, որ այդ մասին վկայութիւն չկայ Աստուածաշնչում, այլ որովհետեւ նրանք այդ ձեւով ուզում էին յստակօրէն տարբերուել Կաթոլիկ եկեղեցուց։ Իսկ եթէ մի պահ ուզենք բողոքական որոշ հոսանքների նման Աստուածաշնչի տառից կառչել, ապա այդ դէպքում պէտք է բոլորս էլ խաչ կրենք մեր ուսերին, փողոցներով քայլենք ու յայտարարենք, թէ մենք Յիսուսին ենք հետեւում, քանի որ Յիսուս Ինքն ասաց. **«Ով իր խաչը չի վերցնում ու իմ յետեւից չի գալիս, ինձ արժանի չէ» (Մատթ. 10, 38։ 16, 24)։**

Խաչակնքումն իսկապէս յստակ մի գործողութիւն է, որը խորապէս արմատաւորուած է ինչպէս Հին, այնպէս էլ Նոր կտակարանում։ Հին ուխտի մարգարէութիւնը խաչի կնիքի մասին հետեւեալն է. **«Ես նրանց գործերն ու խորհուրդները գիտեմ. պիտի գամ, որպէսզի հաւաքեմ բոլոր ազգերին ու բոլոր լեզուները. թող գան ու տեսնեն իմ փառքը։ Նրանց վրայ <u>նշան պիտի թողնեմ</u>։ Նրանց միջից փրկուածներին պիտի ուղարկեմ ազգերի մէջ» (Ես. 66, 18-19)։** Սաղմոսագրքում էլ երանելի Դաւիթն ասում է. **«Եւ ինձ բարութեան <u>նշան</u> ցոյց տուր. թող**

1 https://www.csmedia1.com/ziondetroit.org/sign-of-the-cross.pdf (առ 12/10/2023):

ատելիներն իմ տեսնեն ու ամօթահար լինեն, որ դու, Տէ՛ր, օգնեցիր ու միխիթարեցիր ինձ» (Սաղմ. 85, 17)։

Քրիստոսի եւ առաքեալների ժամանակ հրէական սինագոգում Աստծու անունը ճակատին գծագրելու մի ծիսակատարութիւն կար։ Հրեաներն Աստծու անունը խորհրդանշական կերպով մակագրել են եբրայերէնի այբուբենի առաջին (Ալեֆ) եւ վերջին (Տաւ) տառերով։ Սա անում են՝ նշանակելու Աստծու Անսահմանութիւնն ու Ամենազօրութիւնը, որն Իր մէջ պարունակում է կատարելութեան ամբողջութիւնը։ Նմանապէս, Տէրն Իր մասին ասում է Յայտնութեան գրքում. «Ես եմ Ալֆան և Օմեգան, սկիզբը և վերջը» (Յայտն. 21, 6)։ Աստիճանաբար այս երկու տառերը փոխարինուեցին միակ «Տաւ» տառով, որը գրւում էր ճակատին։

Եզեկիէլ մարգարէն տեսիլք է տեսնում, որի ժամանակ խօսւում է խորհրդնշական աղէտի մասին, որը պէտք է պատահի Երուսաղէմ քաղաքում։ Համաձայն նրա տեսիլքի՝ մահը պիտի չազդեր այն բարեպաշտ մարդկանց վրայ, որոնց ճակատներին Տիրոջ հրեշտակը պիտի գծագրեր փրկութեան նշանը։ Եզեկիէլ մարգարէն ասում է, թէ Տէրն Իր մօտ է կանչում սքեմ հագած մարդուն եւ ասում նրան. «Անցի՛ր Երուսաղէմ քաղաքի միջով ու նշա՛ն դիր այն մարդկանց ճակատին, որ հեծում են ու հոգոց հանում այդ վայրերում կատարուած անօրէնութիւնների վրայ» (Եզեկ. 9, 4)։ Յունական եւ հրէական Սուրբ Գրքերում գրուած է՝ ճակատների վրայ «նշա՛ն դիր», այսինքն՝ գծագրի՛ր «Տաւ» խաչաձեւ տառը (Tāw, Thau, Tav)։ Այդ նշանը եբրայերէն այբուբենի 22-րդ՝ վերջին տառն է, որն ըստ հրէական մտածողութեան՝ եղել է պատկանելութեան նշան։ Տառի տեսքը յետագայում փոխուել է, սակայն ի սկզբանէ խաչի տեսք է ունեցել։ Մասնաւորապէս, սբ. Ջերոմը հաստատում է, որ նշանը ձեւաւորուել է եբրայերէն այբուբենի վերջին տառի նման եւ իր վաղ ձեւերով խաչի տեսք ուներ։



Ժամանակակից եբրայերէն «Տաւ» տառը

Եբրայերէն «Տաւ» տառը Եզեկիէլի ժամանակ

*Դարերի ընթացքում Եզեկիէլ 9, 4-ի այս մեկնաբանութիւնը լրջօրէն ընդունուել է ինչպէս սուրբերի, այնպէս էլ գիտնականների կողմից: Մենք նոյն նշանն ենք դրոշմում մեր ճակատներին, երբ մկրտւում ենք: Հետաքրքիր է, որ Յայտնութեան գիրքն էլ ունի 22 գլուխ, որտեղ խօսւում է նոյն կնիքի մասին. «**Նրանց ասուեց, որ չվնասեն երկրի խոտին, ոչ էլ ծառերին, այլ միայն՝ երկրային այն մարդկանց, որոնք իրենց ճակատի վրայ չունեն Աստծու Կնիքը**» (Յայտն. 9, 4): Քրիստոսին հաւատացողներն իսկապէս ստանում են կենդանի Աստծու կնիքն իրենց մարմնի վրայ՝ համաձայն Յովհաննէս առաքեալի խօսքերի. «**Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ, որ ելաւ արեւելքից եւ ունէր կենդանի Աստծու կնիքը. եւ բարձր ձայնով աղաղակեց այն չորս հրեշտակներին, որոնց իշխանութիւն էր տրուած՝ վնասելու երկրին եւ ծովին: Եւ ասում էր. «Վնաս մի՛ տուէք երկրին. ո՛չ ծովին, ո՛չ ծառերին. սպասեցէ՛ք, մինչեւ որ կնիք դնեմ իմ Աստծու ծառաների վրայ**» (Յայտն. 7, 2-3): Նմանապէս՝ «**Եւ ես տեսայ. ահա Գառը կանգնած էր Սիոն լեռան վրայ. եւ նրա հետ՝ հարիւր քառասունչորս հազար հոգի, որոնք նրա եւ նրա Հօր անունն ունէին գրուած իրենց ճակատների վրայ**» (Յայտն. 14, 1):*

*Նոր կտակարանի այլ համարներում նոյնպէս հանդիպում ենք Աստծու սեփականութիւնը համարուող կնիքի գաղափարին, որը Եկեղեցու անդամները կրում են իրենց անձերում: Յովհաննէս առաքեալն ասում է. «**Վնաս մի՛ տուէք երկրին. ո՛չ ծովին, ո՛չ ծառերին. սպասեցէ՛ք, մինչեւ որ կնիք դնեմ իմ Աստծու ծառաների վրայ**» (Յայտն. 7, 2-3): Կորնթացիներին*

*ուղղուած երկրորդ նամակում Պօղոս առաքեալը գրում է. «Նա, **որ հաստատեց մեզ ի Քրիստոս ձեզ հետ միասին եւ օծեց մեզ, Աստուած է, որ մեզ կնքեց էլ եւ Հոգու առհաւատչեան դրեց մեր սրտերի մէջ» (Բ. Կորնթ. 1, 22)։ Նման լեզուն օգտագործւում է նաեւ Պօղոս առաքեալի՝ եփեսացիներին ուղղուած նամակում (տե՛ս Եփես.1,13 եւ 4,30), որտեղ նա խօսում է այն մասին, թէ ինչպէ՛ս են քրիստոնեաները «կնքւում» Սուրբ Հոգով։ Այս երեք տեքստերում յունարէն բառը յաճախ թարգմանւում է որպէս «կնքուել»* (σφραγίζω, sphragizō) *եւ սա այն նոյն բառն է, որը գործածուած է Յայտնութեան գրքում (Յայտն. 7, 3), որը նշանակում է՝ կնիք դնել կամ նշել կնիքով տարբեր նպատակների համար, այդ թւում՝ սատանայից պաշտպանուելու եւ մարդու սեփական հաւատքի վկայութիւնն ապացուցելու համար։*

Խաչակնքումը՝ որպէս առաքելական դաւանանքի խոստովանութեան հակիրճ աղօթք

Խաչակնքումը մեր հոգու աղօթքն է, որով արտայայտում ենք մեր հաւատամքի խոստովանութիւնը: Այն առաքելական դաւանանքի խոստովանութեան ամփոփումն է: Այսպէս, մեր երեք մատները՝ բթամատը, ցուցամատը ու միջնամատն՝ իրար միացնելը խորհրդանշում է Սուրբ Երրորդութեան երեք անձերի միասնութիւնը, միւս երկու մատները՝ մատնեմատը ու ճկոյթը, միասին սեղմում ենք ափի մէջ, որը խորհրդանշում է Քրիստոսի աստուածային ու մարդկային բնութիւնների միութիւնը: Այսպիսով, խաչակնքուելով մեր հոգու լուռ աղօթքն ենք ուղղում Սուրբ Երրորդութեանը: Իսկ արտասանելով «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» բառերը՝ քրիստոնեան արտայայտում է այն ճշմարտութիւնը, թէ մարդիկ Խաչի միջոցով ընդունուած են հաղորդակցութեան Ամենասուրբ Երրորդութեան հետ, քանի որ Աստծու եւ երկնքի հետ մարդուն կապող միակ կամուրջը Խաչն է: Մենք յայտարարում ենք մեր հաւատքն առ այն, ինչ Աստուած արել է՝ մարդկութեան փրկագնումը մեղքից ու մահից, Եկեղեցու հիմնադրումը, որը նոր կեանք է առաջարկում բոլորին: Խաչակնքուելով մենք խոստովանում ենք, որ շնորհքն ու ողորմութիւնը եւ այն ամէնը, ինչ մենք ունենք, միայն Քրիստոսի Խաչով է:

Աղօթելու ժամանակ, երբ տեառնագրում ենք մեր մարմինները, խնդրում ենք, որ Սուրբ Աստուածածինը, պահապան հրեշտակներն ու սուրբերի դասերը բարեխօս լինեն Աստծու առաջ մեզ համար: Խաչակնքուելը քրիստոնեայի համար խաչակրութիւն է Քրիստոսի հետ, Խաչի երկրպագութիւն է եւ մեր հաւատի խոստովանանքը: Խաչակնքուելը յիշեցնում

է մեզ Յիսուսի կրած չարչարանքները եւ փառաւոր յաղթանակը՝ ընդդէմ կեանքի ու փրկութեան թշնամու։ Խաչակնքուելով քրիստոնեան Աստծու զօրութիւնն է խնդրում իր մտքի, մարմնի եւ հոգու համար։ Մեր մարմնի վրայ ձեռքի շարժումով գծագրած խաչի նշանն իմաստաւորում է կեանքի յաւէրժութիւնը յանուն Յիսուսի՝ իր բոլոր ծանրութիւններով ու չարչարանքներով։ Այն նաեւ իմաստաւորում է վերջնական յաղթանակի վերաբերեալ մեր վստահութիւնն ու համոզումը։

Պէտք է այնպէս խաչակնքուել, որ մարմինն էլ զգայ մեր խաչակնքումը։ Երբ մարդ խաչակնքւում է անփութօրէն, խաչը չի կարող նրան պաշտպանել։ Հետեւաբար, հարկ է խաչակնքուել աղօթքով եւ ուշադրութեամբ։ Խաչակնքուելու ժամանակ Սուրբ Հոգու շնորհն իջնում է, եւ մարդու վրայ անտեսանելիօրէն եւ աներեւութաբար դրոշմւում է ամենայաղթ եւ հրեղէն խաչը, որ այրում է բոլոր մեղքերն եւ ախտերը՝ կենդանացնելով նրան։ Հետեւաբար, պէտք է կանոնաւոր կերպով եւ մշտապէս խաչակնքուել։ Խաչակնքուելով հաւատանք, որ խաչեալին ենք հրաւիրում մեր սրտերից ներս, որպէսզի խաչի նշանը տեառնագրելով մեր մարմինների վրայ՝ օրհնութիւն ու բժշկութիւն բերի մեզ։

Սբ. Գրիգոր Տաթեւացին *իր «Գիրք քարոզութեան որ կոչի Զմեռան հատոր» գրքում գրում է. «Ո՞րն է խաչի օրհնութիւնը, որն անընդհատ դրոշմում ենք երեսներիս, կերակուրի կամ այլ նիւթերի վրայ։ Ասում ենք, որ այս անմարմին նշանին բաւական է մտքի անմարմին դիտաւորութիւն, որը դրոշմում ենք Քրիստոսի անունով։ Սա է [խաչի] նշանի դրոշմի օրհնութիւնը։ Դարձեալ ասում ենք, թէ ամէն օրհնութիւն կատարւում է սուրբ օծութեամբ, խօսքով, սուրբ կոչմամբ։ Նոյնպէս եւ այստեղ խօսքով կանչում ենք Սուրբ Երրորդութեան անունը եւ մատներով դրոշմում ենք սուրբ Նշանը, որով սրբւում է*

ամէն նիւթ, այսինքն՝ օրհնութեան խօսքով եւ սուրբ նշանով»[1]։

Այսպիսով, խաչակնքուելու զօրութիւնը, որը սարսափեցնում է նոյնիսկ դեւերին, լաւագոյն միջոցն է՝ պաշտպանուելու անմաքուր խորհուրդներից, մտքերից ու տրամադրութիւններից, որոնք յաճախ ներգործում են դեւերի կողմից՝ հոգին աղօթքի համար անհրաժեշտ ակնածալից վիճակից հեռացնելու նպատակով։ Խաչակնքուելն աղօթքի ժամանակ մեծ զօրութիւն ունի, որը մեզ համար կարող է փրկարար լինել միայն մեր խաչուած Փրկչի հանդէպ հաւատով, ինչպէս Քրիստոսի Խաչի նիւթական պատկերը կարող է փրկարար լինել նրան նայողների համար։ Քանի որ Քրիստոսի Խաչի մեր պաշտամունքը վերաբերում է ոչ թէ փայտին ու գոյներին, այլ՝ նրա վրայ խաչուած Տիրոջը։ Այսպիսով, խաչակնքուելով մեր միտքը պէտք Խաչեալի վրայ լինի, հակառակ դէպքում՝ մենք պէտք է վախենանք, որ այն նոյնքան անօգուտ կը կլինի, որքան աղօթքի խօսքերը՝ առանց դրանք հասկանալու զգացողութեան։ Ինչպէս օգուտ չկայ աղօթելուց՝ առանց աղօթքի բառերը հասկանալու եւ աղօթքի հոգու, այնպէս էլ պտուղներ չեն կարող քաղել առանց ուշադրութեան յաճախակի խաչակնքուելուց։ Բայց եթէ հնարաւոր չէ խղճալ նրանց, ովքեր առանց հասկանալու են խաչակնքւում, ապա չի կարելի արդարացնել նրանց, ովքեր կա՛մ խուսափում են խաչակնքուելուց, կա՛մ էլ անզգուշօրէն, ձեւականօրէն եւ առանց պատշաճ յարգանքի են խաչակնքւում։ Նոյն կերպ, չի կարելի հաւանութիւն տալ նրանց, ովքեր խաչակնքւում են օտար առարկաներով կամ Խաչի նշանը ճիշդ ձեւով պատկերելու փոխարէն ձեռքը կրծքին դրած ինչ-որ հապճեպ եւ իմաստազուրկ շարժումներ են անում։

Խաչակնքումը գործածւում է ոչ միայն աղօթքի, այլեւ

1 http://mail.armenianhouse.org/babajanyan/cross-am/3.html (առ 1/10/2023):

քահանայի կողմից բոլորին բաշխուող օրհնութեան ժամանակ՝ ի նշան տեառնագրման։ Այս օրհնութեան բաշխմամբ հոգեւորականի՝ հինգ մատով խաչակնքումը, ի տարբերութիւն խաչակնքուելու, ներկայացնում է Յիսուս Քրիստոսի կրճատ անուան տառերի նմանութիւնը։

«Փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմիններում»

*Երբ մարդն աղօթում է Աստծուն, պէտք է ոչ միայն մտքով եւ խօսքով աղօթի, այլ նաեւ իր մարմնով: Հոգեւոր երկրպագութիւնն առ Աստուած պէտք է ուղեկցուի հոգու եւ մարմնի սերտ փոխազդեցութեամբ: Պօղոս առաքեալն ասում է. «**Չգիտէ՞ք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մէջ է, եւ որն ստացել էք Աստծուց. եւ դուք ձեր տէրը չէք, քանզի մե՛ծ գնով գնուեցիք: <u>Փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմիններում</u>**» (Ա. Կորնթ. 6, 19-20):*

Քրիստոնեայի մարմինը Սուրբ Հոգու տաճար է: Աստծու Հոգին Սուրբ է, եւ հետեւաբար, մենք մեր մարմինը պէտք է պահենք սրբութեան մէջ, որովհետեւ գնուած ենք Յիսուս Քրիստոսի թանկագին Արեամբ: Քրիստոնեան այլեւս չի պատկանում ինքնիրեն, այլ՝ Աստծուն: Այնպէս որ հիմա մենք պէտք չէ հաճոյ լինենք մեր մեղսալի էութեանը, այլ՝ Տիրոջը: Ուստի, պէտք է ձգտենք փառաւորել Տիրոջը նաեւ մեր մարմիններում: Եւ դրա համար հարկ է մաքուր պահել այն: Եթէ ներքին այս համոզմամբ եւ աղօթքով խաչի նշանը մեր մարմինների վրայ պատկերենք՝ հայցելով Տիրոջ օգնականութիւնը, ապա Նրա զօրութեամբ մեր մարմինը կը մաքրուի ամէն տեսակի մեղքերից: Ուրեմն հնազա՛նդ լինենք Տիրոջը, մաքրուե՛նք մեր մարմնաւոր աղտեղութիւններից, խաբուսիկ եւ արատաւոր ցանկութիւններից, որպէսզի կարողանանք փառաւորել մեր Տէր Աստծուն: Իսկ խաչակնքումը կարող է համարձակութիւն հաղորդել մեր աղօթքին, քանի որ դա անելով՝ յայտարարում ենք, որ Տէր Յիսուս Քրիստոս խաչի վրայ թափած Իր Արեան շնորհիւ մեզ հաշտեցրեց Աստծու հետ՝ ազատելով մահաբեր մեղքի կապանքից եւ մեզ

խաղաղութիւն պարգեւելով (տե՛ս Կող. 1, 19-20)։

Խաչակնքումը մեր մարմնական աղօթքն է։ Խաչակնքուելով հաւատացեալը գիտակցում է եւ հաստատում Աստծու ներկայութիւնն ու Նրա փրկաբեր գործողութիւններն իր կեանքում, յիշում է Քրիստոսի չարանքները, խաչելութիւնը, Յարութիւնը եւ փառաբանում է Ամենասուրբ Երրորդութիւնը ոչ միայն իր հոգով, այլեւ իր մարմնով։ Խաչակնքուելով հաւատացեալն ընդունում է Աստծու հեղինակութիւնն իր անձի նկատմամբ, խոնարհւում եւ երկրպագում է իր Արարչին։ Աստծուն երկրպագութիւնը լինում է ինչպէս ներքին՝ հոգով, այնպէս էլ արտաքին՝ մարմնի դրսեւորումով։ Բարեպաշտ քրիստոնեան այսպիսի աստուածապաշտութեամբ է արտայայտում իր սէրն ու հաւատը։ Արտաքին՝ մարմնական երկրպագութեան դրսեւորումներն են ծնրադրումը, սուրբ խաչի, սրբապատկերների, նիւթեղէն սրբութիւնների առջեւ խոնարհուելը, դրանք համբուրելը, դրանց առջեւ խաչակնքուելը եւ այլն։

Խաչակնքումը խորհրդանշում է խոնարհուելը՝ բարձրանալու եւ ճշմարտութեանը հասնելու համար, խորանալու դէպի վար, բարձրանալու՝ դէպի վեր եւ տարածուելու ձախ ու աջ, այսինքն՝ ամէն կողմ եւ ամէն ուղղութեամբ։ Մենք Աստծու առաջ խոնարհւում ենք հոգեպէս եւ մարմնապէս։ Մարմնական խոնարհումը լինում է ծնրային եւ գոտկային, ինչպէս նաեւ աղօթքով ու խաչակնքումով խոնարհեցնում ենք մեր գլուխը, որպէսզի Տէրը մեզ շնորհի խոնարհ ու փշրուած սիրտ, քանի որ Նա հանգչում է խոնարհների սրտերում եւ հակառակ է հպարտներին։ Յեսուի որդի Սիրաքն ասում է. ***«Երանի հեզերին, որովհետեւ նրանք երկիրը պիտի ժառանգեն»*** *(Մատթ. 5, 5)։ Եւ դարձեալ՝* ***«Ինչքան մեծ լինես, այնքան խոնարհեցրո՛ւ քո անձը, եւ շնորհ կը գտնես Տիրոջ առջեւ, քանզի մեծ է Տիրոջ զօրութիւնը, եւ Նա փառաւորում է Իր կամքը***

կատարող խոնարհներին» (Սիր. 3, 20)

Անանիա Նարեկացին *ասում է. «Արդ, խոնարհութիւնն է ողջ առաքինութեան գլուխը, քանզի ոչ ոք Աստծուն այնպէս սիրելի չէ, ինչպէս նա, ով խոնարհ է եւ իրեն յետին է համարում յանուն Քրիստոսի»*[1]*: Եթէ մէկը խաչակնքուելով խոնարհութեամբ ասի՝ «Տէ՛ր, ողորմեա՛», կամ «Ների՛ր, Տէ՛ր», դրանով նա այրում է դեւերին, քանզի խաչակնքումը հոգու խոնարհութեան անպարտելի զէնքն է:*

Խաչակնքուելով մենք դիպչում ենք մեր մարմնի հինգ մասերին՝ ցոյց տալով, որ Յիսուսի հինգ մասերը վիրաւորուեցին. Նրա երկու ձեռքերն ու երկու ոտքերը գամուեցին փայտին, իսկ Նրա կողը խոցուեց գեղարդով: Ուրեմն, խաչակնքելով մեր մարմինը՝ մենք Աստծու ներկայութիւնն ենք բերում մեր կեանքից ներս: Խաչակնքումն աստուածապաշտական սրբազան այն գործողութիւնն է, որով մենք փառաբանում ենք Աստծուն նաեւ մեր մարմիններով: Պէտք է վստահ լինենք, որ Տէր Յիսուս Քրիստոսի Խաչի զօրութիւնն այսպէս տարածւում է նաեւ մեր աղօթքների միջոցով, եւ որպէս վստահութեան նշան՝ ամէն անգամ աղօթելիս եւ խաչակնքուելիս մենք պաշտպանւում ենք Խաչի նշանի զօրութեամբ: Իսկապէս, մեր աղօթքներն առ Աստուած այլ կերպ չենք կարող բարձրացնել, քան հաւատալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի՝ Խաչի վրայ կրած չարչարանքների փրկարար զօրութեանը:

Սուրբ վարդապետները սովորեցնում են, թէ աստուածապաշտութեան մէջ ամէն ինչ, ըստ իր էութեան եւ նշանակութեան, միջոց է եւ ո՛չ թէ լոկ նիւթի կամ ձեւի արտաքին արտայայտութիւն, քանի որ մենք հոգի ու մարմին ենք եւ այդ իսկ մարմնաւոր բնութեամբ սահմանափակ ենք: Եւ որպէսզի մեր հաւատքը լիակատար լինի, անհրաժեշտ են նաեւ հոգեւոր

1 **Աշոտ դպիր Արեւշատեան**, «Խրատանի ապաշխարհութեան», Երեւան, 2023, էջ 101:

երեւոյթների տեսանելի, նիւթական եւ մարմնաւոր այնպիսի խորհրդաւոր վկայութիւնները, որոնք յիշեցնում են ինչ որ կարելի է տեսնել միմիայն հոգեւոր աչքով եւ որոնցից մեր զգայարանները բարեպաշտութեան զգացումներ են ստանում ու հոգեւորապէս արտայայտւում են աստուածապաշտութեան մէջ: Աստուած արտաքին՝ նիւթական արտայայտութեամբ եւ առարկաներով մեզ խորհրդաւոր կերպով մօտեցնում է Իր անտեսանելի գիտութեանն ու աստուածային զօրութեանը եւ տեսանելի ձեւերով մեր մտքերում սերմանում է Իր հոգատարութեան մասին յիշողութիւնը՝ մեզ կապելով Իր սիրոյ նուիրական խորհուրդներին: Հետեւաբար, նիւթական եւ տեսանելի խաչը մեզ համար Սրբութիւն է՝ Աստուածային Սուրբ Նշան, Կնիք Տէրունեան, Նշան Յաղթութեան եւ պատճառ երկրպագութեան:

Մարմնական շարժուձեւերը կարեւոր են: Այն, ինչ անում է մեր մարմինը, միանշանակ կարող է ազդել մեր հոգու վրայ: Նոյնիսկ մեղքերի խոստովանանքի ընդհանուր բանաձեւն արտասանելով՝ մենք խոստովանում ենք, որ մեղանչում ենք մարմնի ցանկութեամբ, զգայութեամբ, բոլոր մասերով ու անդամներով, հինգ զգայարաններով եւ վեցեակ շարժումներով: Ցանկացած մեղք նախ խորհուրդներում է յղացւում եւ ապա գործւում մարմնի անդամներով: Մարդու մարմնի ցանկութիւնների աղբիւրը հոգու մէջ է թաքնուած: Մեր մարմինը միջոց է, որով մարդու մտքում ծնուած գաղափարներն ի կատար են ածւում: Մարմինը նոյնպէս նպաստում է, որ հոգին ցանկութիւններ ծնի, քանի որ իր զգայարաններով հաղորդակցուելով արտաքին աշխարհի հետ՝ հոգուն «նիւթ» է մատակարարում՝ բարի կամ չար խորհուրդներ ու ցանկութիւններ ծնելու համար: Այսպիսով՝ հոգին ու մարմինը գործում են փոխշաղկապուած:

Մեր նիւթական մարմինը կարիք ունի խնամքի՝ կենդանի

մնալու եւ մեր հոգու փրկութեանը ծառայելու համար։ Օրինակ՝ ծնկի գալն օգնում է մեզ աւելի աղօթասէր դառնալ, քանի որ յիշեցնում է, թէ ում ենք մենք աղօթում եւ ենթարկւում։ Ծնրադրութիւնը նաեւ խոնարհութեան նշան է, ինչն առաւել աստուածահաճոյ է՝ ըստ այն խօսքի, թէ՝ «**Ով բարձրացնում է անձը, կը խոնարհուի, եւ ով խոնարհեցնում է իր անձը, կը բարձրացուի**» (Մատթ. 23,12)։ Ահա թէ ինչո՛ւ մենք պարզապէս չենք նստում Սուրբ Պատարագի արարողութեան ողջ ընթացքում, այլ երկրպագութեան ժամանակ իւրաքանչիւր դիրք ունի մի պատճառ։ Ժնեւի եպիսկոպոս Սբ. Ֆրանցիսկոս դը Սալեսը եւս մէկ անգամ լաւագոյնս արտայայտւում է. «Անշուշտ, աղօթքի էութիւնը հոգու մէջ է, բայց ձայնը, մեր գործողութիւնները եւ այլ արտաքին նշանները, որոնցով մենք արտայայտում ենք մեր ներքին վիճակը, աղօթքի ազնիւ ուղեկիցներն ու ամենաօգտակար յատկութիւններն են, քանի որ դրանք նրա ազդեցութիւններն են եւ գործերը։ Հոգին չի գոհանայ աղօթելուց, եթէ մարդն ամբողջ էութեամբ դա չանի։ Հոգին, իրօք, ստիպում է աչքերին, ձեռքերին եւ ծնկներին աղօթել իր հետ միասին»։»[1]։

Քրիստոնեան կոչուած է Աստծուն երկրպագելու եւ փառաւորելու ոչ միայն իր հոգով եւ մարմնով, այլեւ իր շուրջը եղած ամէն բան ուղղելով Տիրոջ փառքի համար. «**Արդ, ուտէք թէ խմէք, կամ ինչ էլ անէք, ամէն ինչ արէ՛ք Աստծու փառքի համար**» (Ա. Կորնթ. 10, 31)։ Աղօթքով եւ խաչակնքումով պէտք է սրբացնենք ոչ միայն ինքներս մեզ, այլեւ այն, ինչ օգտագործում ենք։ Որովհետեւ «**Աստծու բոլոր ստեղծածները լաւ են, եւ խոտան բան չկայ, մանաւանդ երբ դրանք գոհութեամբ են ընդունւում. քանի որ Աստծու խօսքով եւ աղօթքով ամէն բան մաքրւում է**» (Ա. Տիմ. 4, 4-5)։ Քրիստոնեան կոչուած է իր

1 https://catholicstand.com/the-sign-of-the-cross/ (առ 10/10/2023):

*հոգով, մարմնով, մտքով, շուրթերով եւ ձեռքերով կատարելու սաղմոսի հրահանգը. «**Թող նրանք փառաբանեն Աստծուն իրենց բերաններով. նրանց ձեռքերում երկսայրի սրեր կան**» (Սաղմ. 149, 6)։*

Սբ. Դիոնիսիոս Արիսպագացին *ասում է. «Մենք, ըստ կարողութեան, մեր միտքն ուղղում ենք դէպի աստուածայինը։ Մենք չենք կարող անմիջականօրէն ամբառնալ դէպի հոգեւոր էութիւնների ճանաչումը։ Մենք կարիք ունենք մեր բնութեանը յատուկ ու համապատասխան միջոցների, որոնք մեզ համար հասկանալի պատկերներով են երեւան հանում այն պատկերելին ու գերզգայականը, որպէսզի մենք զգայականի միջոցով բարձրանանք դէպի հոգեւորը»*[1]*։ Հետեւաբար, խաչակնքումը խնկարկումը, սրբապատկերները եւ ծիսական բոլոր նիւթեղէն սրբութիւնները կամուրջ են տեսանելի-զգացական եւ անտեսանելի հոգեւոր աշխարհների միջեւ։*

*Քրիստոնէութեան ամբողջ քարոզչութիւնը Յարութիւն առած Խաչեալի մասին է. «**որովհետեւ իմ մտքում չեմ դրել իմանալ ձեր մէջ այլ բան, եթէ ոչ՝ միայն Յիսուս Քրիստոսին եւ նոյն ինքը խաչուածին**» (Ա. Կորնթ. 2, 2)։ Սրա համար Խաչեալ Խաչի առջեւ խոնարհուելով՝ խաչակնքւում ենք, որպէսզի մշտապէս Տիրոջը յիշենք, օրհնենք ու փառաբանենք Նրան՝ Խաչի շարչարանքները կրելու համար։ Խաչեալին օրհնում եւ փառաբանում ենք մեր հոգիներում. եւ ոչ միայն հոգիներում, այլ նաեւ մարմնաւորապէս։ Տէրունական Յաղթութեան նշանի մեծ խորհրդի առջեւ խոնարհւում ենք, երկիւղածութեամբ մեր մարմինները խաչակնքում եւ Ս. Խաչի Յաղթութեան օրհնուած նշանը մեր պարանոցների վրայ պարծանքով կրում։ Մարդ արարածի հոգեւոր ու մարմնաւոր գոյութիւն չի կարող յառաջանալ աստուածապաշտութեան եւ աստուածաճանա-*

1 **Դիոնիսիոս Արիսպագացի**, «Յաղագս երկնային քահանայապետութեանց», Էջմիածին ամսագիր, Ե, 1979։

*չողութեան մէջ եւ բարեզարդուել լոկ հոգեւորապէս կամ սոսկ մարմնաւորապէս, այլ հաւասարապէս երկուսով պէտք է Աստծու առաջ խոնարհուի ու Նրան պաշտի։ Սուրբ վարդապետներն ասում են, թէ հոգեւորի թուլացումից առաջանում է կեղծաւորութիւնը, ցուցամոլութիւնը եւ հպարտութիւնը, որը խաբէական է, իսկ մարմնաւորի կասեցմանը հետեւում է սառնութիւնը, եսասիրութիւնը եւ եսապաշտութիւնը, որոնց երկու տեսակի միակողմանիութիւնը ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ մարդու գոյութեան կիսակատար խոնարհումն Աստծու առաջ։ Ուրեմն, թերի է այն աստուածապաշտութիւնը, որը կտրուած է մարդու մարմնաւոր կեանքի ընթացքից ու կապուածութիւնից, քանզի զուրկ է արտայայտութիւնից եւ արտաքին կենդանացումից ու կենսունակ վարժութիւնից։ Հաւատացեալ քրիստոնեայի համար խաչակնքումը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ խաչակնքումը ներկայումս հաւատքի, յոյսի, սիրոյ, զօրութեան, յաղթանակի ու փրկութեան նշան է։ Իսկ անհաւատի համար, ինչպէս խաչի նշանը, այդպէս էլ խաչի կնիքն ընդունելը յիմարութիւն ու գայթակղութիւն է։ Հետեւաբար, լիակատար կեանքով պէտք է Աստծուն պաշտել, «**քանզի մեծ գնով գնուեցինք. ուստի փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմինների՝ում**» (Ա. Կորնթ. 6, 20)։*

Խաչակնքումը՝ որպէս մկրտութեան յիշեցում եւ վերահաստատում

*Խաչի նշանը սերտօրէն կապուած է Մկրտութեան հետ։ Յիսուս Իր առաքեալներին պատգամում է. «**Գնացէ՛ք, ուրեմն, աշակերտ դարձրէ՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով**» (Մատթ. 28, 19)։*

Խաչակնքուելով մենք յիշում ու վերահաստատում ենք մեր Մկրտութիւնը։ Մկրտուողի վրայ Խաչի կնիքի դրոշմումը խորհրդանշում է Խաչի վրայ Քրիստոսի փրկագործութեան շնորհը, որով քրիստոնեայ դարձանք եւ որդեգրուելով Հայր Աստծուն՝ Նրա հետ կապուեցինք յաւիտենական ուխտով։ Եւ ամէն անգամ, երբ խաչակնքւում ենք, մենք յիշում ենք, որ պատկանում ենք Քրիստոսին։ «Խաչակնքուել» բառն արտայայտում է «խաչ» ու «կնք(ու)ել» իմաստները՝ Խաչի կնիքը դրոշմել մեր վրայ, այսինքն՝ կնքուել աւետարանական ողջ ճշմարտութեամբ։ Առաջին դարի քրիստոնեաներն սկսեցին խաչակնքուել՝ որպէս յիշեցում իրենց վերստին ծննդեան ու նորոգութեան, թէ ի՞նչ պատահեց իրենց, երբ մկրտուեցին։ Նոյնկերպ Խաչն այսօր գործում է մեզ համար։ Խաչակնքուելով մենք յայտարարում ենք, թէ Աւազանի Մկրտութեամբ՝խորհրդաբար միանալով Յիսուս Քրիստոսին՝ մենք հաղորդակից եղանք Նրա մահուանը, որպէսզի ապրենք նոր կեանքով (տե՛ս Հռոմ. 6, 3-4։ Գաղ. 2, 20)։ Խաչակնքուելով յայտարարում ենք, որ մեր միջի հին մարդը Քրիստոսի հետ խաչուեց, ուստի ես չէ՛ որ ապրում եմ, այլ Քրիստոս՝ իմ մէջ։ Միանշանակ, մենք ասում ենք «այո՛» մեր միջի հին մարդու մահուան դատավճռին Աստծու կողմից (մեղաւոր բնութիւնը մեր մէջ պէտք է մեռնի Քրիստոսի հետ

Խաչի վրայ) եւ կրկին ասում ենք «այո՛» նոր կեանքին, որը Քրիստոս մեզ շնորհեց Խաչի վրայ եւ տուեց Ս. Մկրտութեան միջոցով: Մկրտութեան ժամանակ Քրիստոս Խաչի նշանով մեզ տեառնագրեց՝ մեզ դառնմելով Իր որդեգիրները: Իսկ մենք խաչակնքուելով հաստատում ենք մեր հաւատարմութիւնն ու պատկանելութիւնը Նրան: Ուստի, խաչակնքուելով խնդրում ենք, որ Տէրն այդ Մկրտութեան շնորհով վերանորոգի ու վերահաստատի մեզ հաւատքի մէջ:

Օգոստինոս Երանելին *ասում է. «Եթէ խաչակնքումը չօգտագործենք հաւատացեալի մարմինների կամ ջրի վրայ, որի միջոցով նրանք վերածնւում են, կամ դրոշմի ժամանակ, որով մենք դրոշմուեցինք, կամ Սուրբ Զոհի վրայ, որով մենք սնւում ենք. ուրեմն, ամէն բան անպտուղ է...»*[1]*: Խաչի նշանով ու Տիրոջ անունը կանչելով՝ սրբանում են Տիրոջ Մարմինն ու Արիւնը, այսինքն՝ հացն ու գինին է, Մկրտութեան Աւազանը եւ Եկեղեցու ձեռնադրեալ սպասաւորները: Խաչի նշանը բացում է այն դռները, որոնցով Սուրբ Հոգու շնորհը յորդում է հաւատացեալների վրայ՝ նրանց հոգիներում երկրայինը վերափոխելով երկնայինի, դէն նետելով մեղքը, յաղթելով մահուանը եւ ջախջախելով զգայական աչքին անտեսանելի այն պատնէշները, որոնք մեզ բաժանում են Աստծու շնորհից եւ գիտութիւնից:*

Սբ. Բարսեղ Մեծն *ասում է, որ առաքեալները «մեզ սովորեցրել են Խաչի նշանով տեառնագրել նրանց, ովքեր իրենց յոյսը Տիրոջ վրայ են դրել», այսինքն՝ ովքեր եկել են մկրտուելու: Խաչի նշանը հանդիսացել է մատուցուող Սուրբ Պատարագի խորհրդի եւ ծիսական կեանքի հիմքը: Ըստ սբ. Բարսեղի՝ «այդպիսի սովորութիւնները գաղտնի ընդունուել են առաքելական աւանդութիւններից եւ նոյնքան կարեւոր են*

1 https://drevo-info.ru/articles/968.html (առ 10/10/2023):

բարեպաշտութեան համար, որքան այն հրահանգները, որոնք բացայայտօրէն թողնուած են Սուրբ Գրքի կամ սուրբերի կողմից: Նման աւանդութիւնների մերժումը հաւասարազօր է Աւետարանի աղաւաղմանը»: Սբ. Բարսեղը *շարունակում է. «Մկրտութեան ջուրը խորհրդանշական կերպով պատկերում է մահը՝ մարմինն ընդունելով գերեզմանի մէջ, մինչդեռ Սուրբ Հոգին (որի անունով մենք մկրտուած ենք) հաղորդում է կենարար զօրութիւն՝ նորոգելով մեր հոգիները մեղաւոր մահացածութիւնից դէպի սկզբնական կեանք»*[1]*: Մկրտութեան խորհուրդը Սբ. Բարսեղն անուանում է «մարմնական իմաստութեան» թաղում, որն անհրաժեշտ է «հոգեւոր իմաստութեան» ծննդեան համար, «քանի որ* ***մարմնաւոր խորհուրդը մահ է, իսկ հոգեւոր խորհուրդը՝ կեանք եւ խաղաղութիւն. քանզի մարմնաւոր խորհուրդը թշնամութիւն է Աստծուն, որովհետեւ չի հնազանդւում Աստծու օրէնքին. եւ նա ոչ իսկ կարող է: Նրանք, որ մարմնի իշխանութեան տակ են, չեն կարող հաճելի լինել Աստծուն» (Հռոմ. 8, 6-8):***

*Հետեւաբար, խաչի նշանով տեառնագրելով մեր մարմինները՝ ծառայում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ յիշելով եւ վերահաստատելով մեր Մկրտութեան խորհուրդը, որի բուն իմաստն է Քրիստոսի մահն ու Յարութիւնը: Խաչակնքուելով մենք հաստատում ենք, որ «****Մկրտութեամբ թաղուեցինք նրա հետ մահուան մէջ, որպէսզի, ինչպէս որ Քրիստոս մեռելներից յարութիւն առաւ Հօր փառքով, նոյնպէս եւ մենք քայլենք նոր կեանքով. որովհետեւ, եթէ նրա մահուան նմանութեամբ տնկակից եղանք նրան, պիտի լինենք նաեւ նրա յարութեան նմանութեամբ» (Հռոմ. 6, 4-5):***

1 Basil. Magn. De Spirit. Sanctuary, p. 14-15.

Խաչակնքումը՝ որպէս Յիսուս Քրիստոսի չարչարանքների հետ մեր խաչակրութեան խորհրդանիշ

Մենք խաչակնքում ենք ի յիշատակ Խաչի վրայ Աստծու մարմնացեալ Խօսքի՝ Բանն Աստծու կրած չարչարանքների: Այդ մասին մենք իմանում ենք Աստծու ծառայ Մովսէսին տրուած հրամանի եւ մարգարէների քարոզութեան միջոցով: Աստուած Մովսէսին հրամայեց Խաչի կնիքը դնել քահանայապետի ճակատին՝ այն անուանելով սուրբ ու նուիրական թիթեղ: Քանզի Խաչի նշանով կնքւում են քրիստոնեաների ճակատները՝ Բանն Աստծու՝ մարմնով մեզ համար չարչարուելու պատճառով: «Ամէն անգամ, երբ քրիստոնեան խաչակնքւում է՝ խոնարհւում է Քրիստոսի փրկաբեր չարչարանքների առջեւ եւ կանչում է Խաչի զօրութիւնը»,- ասել է Սբ. Պաիսիոս Աթոսացին:

Վաղ քրիստոնէական ժամանակաշրջանի աստուածաբան եւ իմաստասէր Օգոստինոս Երանելին (354-430) քրիստոնեաների խաչակնքումը համարում էր որպէս Յիսուս Քրիստոսի տառապանքների հետ համերաշխութեան խորհրդանիշ: Խաչը մեր մարմինների վրայ տեառնագրելով՝ մենք յայտարարում ենք, որ ինքներս մեզ չենք պատկանում, այլ միայն՝ Քրիստոսի: Խաչակնքելով մեր մարմինները՝ մենք ընդունում ենք այն ցաւն ու չարչարանքը, որոնք գալիս են՝ որպէս Քրիստոսի հանդէպ մեր հաւատքի հետեւանք:

Տէր Յիսուս մեզ հեշտ ու փափուկ կեանք չխոստացաւ: Տառապանքն ու չարչարանքներն Իր աշակերտների կեանքի սովորական մասն էին: Մեզանից ո՞վ չի իմանում, որ կեանքի փշոթ ճամբաներն են մեզ առաջնորդում դէպի երկնային Արքայութիւն: Ո՞վ չգիտի, որ նեղ ճամբաներն

*են, որ մեզ առաջնորդում են այնտեղ, ուր չկայ նեղութիւն: Ո՞վ ծանօթ չէ այս խօսքին. «**Այստեղ, աշխարհում նեղութիւն պիտի ունենաք, սակայն քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին**» (Յովհ. 16, 33), ինչպէս նաեւ՝ «**Ովքեր ցանում էին արտասուքով, ցնծութեամբ պիտի հնձեն**» (Սաղմ. 126, 5-6): Ո՞վ չգիտէ, թէ նրանք, որ «**այժմ լալիս են, պիտի ծիծաղեն**» (Ղուկ. 6, 21): Խաչակնքուելով մենք ինքներս ազդարարում ենք եւս մէկ կարեւոր ճշմարտութիւն: Սբ. Պօղոսի առաքեալի հետ մենք նշում ենք, որ մեր՝ որպէս Քրիստոսի մարմնի անդամների չարչարանքները, նպաստում են Տիրոջ փրկարար աշխատանքին՝ Եկեղեցին սրբութեամբ կատարելագործելու համար. «**Եւ այժմ ուրախ եմ ձեզ համար կրած իմ չարչարանքների համար եւ լրացնում եմ իմ մարմնի մէջ Քրիստոսի նեղութիւնների պակասը իր մարմնի համար, որ է Եկեղեցին**» (Կող. 1, 24): Խաչակնքուելու խորհուրդը՝ մեր խաչը վերցնելն ու Յիսուսին հետեւելն է. «**Եթէ մէկը կամենում է հետեւել ինձ, թող ուրանայ իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ իմ յետեւից**» (Մատթ. 16, 24): Միեւնոյն ժամանակ, սակայն, սա մխիթարական է, քանի որ Տէր Յիսուս, որ մեզ համար դիմացաւ խաչելութեանը, այժմ միանում է մեր ցաւին ու տառապանքին՝ աջակցելով մեզ:*

*Խաչակնքուելով մենք ազդարարում ենք մէկ այլ կարեւոր ճշմարտութիւն: Ո՞վ չգիտէ, որ «**եթէ Իր չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու եւ փառքին**» (Հռոմ. 8,17): Ո՞վ չգիտի, որ «**բոլոր նրանք, ովքեր ուզում են աստուածապաշտութեամբ ապրել Քրիստոս Յիսուսով, հալածանքների մէջ պիտի լինեն**» (Բ. Տիմ. 3, 12): Մենք, սակայն, պէտք է հասկանանք, որ Տէրը մեզ չի ստիպում կրել Իր խաչը, այսինքն՝ դիմանալ այն հալածանքին կամ տառապանքին, որն Ինքն ընդունեց մեզ համար: Նա չի ասում՝ եթէ որեւէ մէկը կամենում է հետեւել ինձ, թող վերցնի Իմ խաչը, այլ*

*ասում է՝ վերցրո՛ւ քո խաչը (Մատթ. 16, 24)։ Որովհետեւ մեր Տէրը գիտի, որ մենք չենք կարող կրել Իր խաչը։ Մենք կարող ենք կրել միայն մեր սեփական խաչերը՝ ըստ մեր ուժերի եւ Նրա օգնութեամբ։ Իւրաքանչիւր մարդ ունի իր խաչը, ինչ-որ չարչարանք, նեղութիւն կամ վիշտ։ Մարդն ունի նաեւ մեղաւոր ցանկութիւններ, եւ մարմինը պայքարարում է ոգու դէմ, կա՛մ ունի անտեսանելի թշնամու գայթակղութիւն, հալածանք, վիրաւորանք, զրպարտութիւն եւ դատապարտում, կա՛մ որեւէ այլ սգաւոր, կա՛մ էլ մարմնական հիւանդութիւններ եւ որեւէ տառապանք։ Սրանք բոլորը մեր խաչերն են, եւ երբ մարդ համբերութեամբ տանում է դրանք Աստծու սիրոյ համար, մասնակցում է Տիրոջ չարչարանքներին եւ նմանւում Նրա խաչելութեանը։ Մեր Տէրը մեր տառապանքները համարում է Իրենը. կարծես դրանք Իր տառապանքներ են։ Եւ ինչպէս որ Տէր Յիսուս բարի գործեր կատարողներին ասում է. «**Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք դա՝ ի՛նձ համար արեցիք**» (Մատթ. 25, 40), այդպէս էլ վիրաւորանքների մասին վիրաւորողներին ասում է. «**Որովհետեւ այս փոքրերից մէկին դա չարեցիք, ի՛նձ համար էլ չարեցիք**» (Մատթ. 25, 45)։ Տէրը շարչարւում է մեր մէջ, ինչպէս Իր իսկ անդամներով։ Նրանք, ովքեր տառապում են, կարծես ճաշից մնացած կտորները հաւաքելով, Տիրոջ չարչարանքներից որոշ մնացորդներ են հաւաքում՝ ըստ Պօղոս առաքեալի խօսքերի. «**Ես լրացնում եմ իմ մարմնի մէջ Քրիստոսի նեղութիւնների պակասը**» (Կող. 1, 24), այսինքն՝ ես շարունակում եմ իմ մարմնով լրացնել Նրա չարչարանքների պակասը։*

*Խաչի նշանը մեր վրայ դրոշմելով՝ մենք ինքներս ազդարարում ենք կարեւոր ճշմարտութիւն. «**Եթէ իր չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու եւ փառքին**» (Ղուկ. 9, 23)։ Եւ ինչպէս Տիրոջ խաչը, այսինքն՝ Տիրոջ չարչարանքը, մեծ ու փառաւոր գործեր արեց, այնպէս էլ մեր խաչերը, այսինքն՝*

մեր չարչարանքներն ու տառապանքները, Աստծու շնորհով մեզ համար չարչարուած Քրիստոսի օգնութեամբ, անում են մեծ ու փառաւոր գործեր՝ Իր փառքին եւ մեզ մասնակից դարձնելով: Կատարելութեան ճամբան անցնում է խաչով: Զկայ սրբութիւն առանց անձնուրացութեան, զոհողութեան եւ հոգեւոր պայքարի: Հոգեւոր յառաջադիմութիւնը ենթադրում է ճգնողական կեանք եւ հոգեւոր մահացում, որոնք աստիճանաբար առաջնորդում են մարդուն՝ ապրելու խաղաղութեան եւ կատարեալ ուրախութեան մէջ: Հետեւաբար, խաչի նշանը մեր վրայ դրոշմելով՝ մենք ինքներս նաեւ ազդարարում ենք, թէ **«Քարոզում նեղութիւններ կրելով է, որ մենք պէտք է մտնենք Աստծու արքայութիւնը»** (Գործք 1, 23): Աստուած չխոստացաւ մեզ տալ հանգիստ կեանք եւ Իր Արքայութիւնն այս աշխարհում, քանի որ այս դարաշրջանը մեզ համար փորձութեան դպրոց է, հոգեւոր սխրանքների ու նուաճումների վայր: Տէր Յիսուս ասաց. **«Քաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»** (Յովհ. 16, 33): Ուրեմն, չյուսահատուե՛նք, երբ մեր վրայ նեղութիւն գայ, այլ ընդհակառակը՝ ուրախանանք այն բանի համար, որ անցնում ենք սուրբերի ճանապարհով, որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ մեզ կեանք պարգեւողը, տառապանքով աւարտեց Իր մարմնաւոր կեանքն աշխարհում: Հետեւաբար, եթէ վշտերը շրջապատեն մեզ, իմանա՛նք, որ դրանք մեր առաջ դրախտի դուռը պիտի բացեն: Դրա համար բոլոր սուրբերի վշտերի ու չարչարանքների Տէրը, ինչպէս նաեւ Իր մարդեղութեան տառապանքները, որոնք Նա կամաւոր կրեց մեզ՝ մեղաւորներիս համար, սովորեցնում են, որ անհնար է այս աշխարհում առանց գայթակղութիւնների ու վշտերի փրկուել՝ արժանանալով Աստծու Արքութեանը: Վշտերն ու գայթակղութիւններն օգտակար են մարդուն, քանզի նրա հոգին դարձնում են առաքինի եւ էլ աւելի ամուր, եթէ նա համարձակօրէն, պատրաստակամօրէն, Աստծու

յոյսով համբերում է այն ամէնին, ինչ որ տեղի է ունենում իր կեանքում, եւ անկասկած հաւատով Տիրոջից ակնկալում է իր ազատագրումը Նրա ողորմածութեամբ։

Խաչի նշանը մեր վրայ դրոշմելը նշանակում է խոնարհութեամբ եւ հնազանդութեամբ ենթարկուել այն ժամանակաւոր վշտերին եւ աղէտներին, որոնք հաճելի են աստուածային նախախնամութեանը, որպէսզի մեզ թոյլ տայ մաքրուել մեր մեղքերից։ Բարսեղ Մեծն ասում է. «Եթէ մէկը վշտի բեռի ծանրութիւնից չի ընկնում, այլ Աստծու յոյսով կրում է այն, ապա իր համբերութեան համար Աստծուց մեծ վարձատրութիւն է ստանում»[1]։

*Քրիստոնեայի կեանքը խաչակրութիւն է բառի բուն իմաստով։ Խաչակնքուելով քրիստոնեան իր լուռ աղօթքով հաստատում է, թէ ինքը, ուրանալով իր անձը, հետեւում է Յիսուսին։ Տէրն ասում է. «**Եթէ մէկը կամենում է գալ իմ յետեւից, թող ուրանայ իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ իմ յետեւից**» (Մարկ. 8, 34)։ Այդպիսի խաչն այնքան է միաձուլւում քրիստոնեայի հետ, որ որտեղ կայ քրիստոնեայ, այնտեղ առկայ է այս խաչը, իսկ որտեղ չառկայ չէ խաչը, այնտեղ չկայ քրիստոնեայ։ Մեզանից իւրաքանչիւրն ունի իր խաչը, որը կազմուած է այն ամէնից, ինչն անհանգստացնում եւ ծանրաբեռնում է մեր ոգին՝ մեր կեանքի բոլոր օրերին տանջելով մեր սիրտը դէպի Տէրը տանող ճանապարհին։ Քրիստոս, մեր խաչը դնելով մեր վրայ, ուզում է, որպէսզի նրանով կատարուի մեր փրկութիւնը։ Նա ցանկանում է, որ մենք փորձ ձեռք բերենք՝ բարին ու չարը տարբերելու, եւ մաքրուենք՝ պայքարելով ինքներս մեր «ես»-ի դէմ, որպէսզի համբերութեամբ կրելով կեանքի բեռները՝ խոնարհութեամբ մօտենանք Աստծու ողորմութեանը եւ յաղթահարելով բոլոր*

1 https://svyatye.com/otcy/O-skorbi/3.html (առ 11/10/2023):

դժուարութիւններն ու փորձութիւնները՝ արժանաւորապէս ձեռք բերենք ճշմարտութեան պսակը։ Խաչը դէպի Գողգոթա տանող Տիրոջը հնարաւոր չէ հետեւել առանց Խաչի, եւ բոլոր նրանք, ովքեր հետեւում են Նրան, անշուշտ իրենց խաչով է, որ հետեւում են։ Քրիստոնեայի խնդիրն է ինքնամաքրուել, ուղղուել ու սրբանալ։ Քրիստոնեան գիտի, որ նման է մի հիւանդի, ով կարիք ունի բժշկական միջամտութեան՝ կտրելու մարմնի հիւանդ մասերը, ինչը չի կարող լինել առանց ցաւի։ Քրիստոնեան ուզում է փախչել ուժեղ թշնամու գերութիւնից, բայց ինչպէս կարող է դա լինել առանց պայքարի, վէրքի ու ցաւի։

Քրիստոնեայի խաչակրութիւնը երկակի է՝ ներքին եւ արտաքին։ Ներքին խաչը մարմնի եւ հոգու միջեւ պայքարն է, որը մենք գտնում ենք մեր ներսում, երբ զգայական մեղաւոր հակումներն ու սովորութիւնները հակադրւում են մեր հաւատքին ու բանականութեանը, երբ մենք տեսնում ենք լաւագոյնը, սակայն հետեւում ենք չարին։ Խաչը կրելն առաւել ցաւալի է, քանի որ խոցում է մեր սիրտը եւ խլում մեր խղճի հանգստութիւնը։ Ներքին խաչը պէտք է յաղթի մեր ներսում գտնուող կրքերին, որոնք պատերազմում են մեր մտքի եւ հոգու դէմ։ Այդ կրքերն են զայրոյթը, ծուլութիւնը, փողասիրութիւնը, փառասիրութիւնը, ցանկասիրութիւնը, նախանձը, լպիրշութիւնը եւ այլն։ Մինչդեռ դդրանց փոխարէն խաչակրութեամբ զօրանում ենք աղօթքով, համբերութեամբ, առատաձեռնութեամբ, խոնարհութեամբ, հեզութեամբ, ժուժկալութեամբ եւ աշխատասիրութեամբ։ Խաչն իսկապէս ծանր է, բայց երբ մեր Տէր Յիսուս սրբացրեց այն Իր Արեամբ եւ չարչարանքներով, մենք այլեւս չենք կարող ասել, որ խաչը կրելն անտանելի է։ Քրիստոնեայի խաչակրութիւնը նաեւ լինում է արտաքին, որով մենք ծանրաբեռնուած ենք դրսից, որովհետեւ, հրաժարուելով ինքներս մեզանից ու հետեւելով

առաքինութեանը, մեր վրայ ենք բարձրացնում կրքերով ստրկացած մարդկանց մի ամբողջ բազմութիւն։ Քրիստոնեայի բարեպաշտութիւնն ամբարիշտ մարդուն զինում է նրա դէմ։ Քրիստոնեայի արդարադատութիւնը հաճելի չէ կաշառակերին։ Քրիստոնեայի խորաթափանցութիւնը նեարդայնացնում է խորամանկ շողոքորթին։ Քրիստոնեայի ժուժկալութիւնն անհանգստացնում է շքեղութեան սիրահարին։ Քրիստոնեայի ջանասիրութիւնը վրդովեցնում է ծոյլին։ Քրիստոնեայի հաստատակամութիւնը տանջում է անզուսպ մարդուն։ Քրիստոնեայի հաւատքը զայրացնում է անհաւատին։ Դրա համար Տէր Յիսուս ասում է. «**Եթէ այս աշխարհից լինէիք, աշխարհն արդէն, որպէս իրենը, ձեզ սիրած կը լինէր. բայց որովհետեւ այս աշխարհից չէք, այլ ես ձեզ ընտրեցի աշխարհից, դրա համար աշխարհը ձեզ ատում է**» (Մարկ. 8, 34)։ Արտաքին խաչը, որը դրսից է դրւում մեր վրայ, ոչ թէ թուլանալն է, օրինակ՝ աղքատութիւնից, ուրիշի նախանձից, զրպարտութիւնից, հալածանքից, պարտականութիւնների բեռից, բամբասանքից, ծաղրանքից, այլ այս ամէնի մէջ քաջութիւն եւ համբերութիւն դրսեւորելը։ Արտաքին խաչը կրելը կախուած է ներքին խաչակրութիւնից։ Նա, ով զսպում է իր կրքերի ձգտումը, համբերատար կերպով կը դիմանայ ողորմած Հօր կողմից արդարօրէն ուղղարկուած ամէն նեղութեան։

Սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է. «Վշտերը կամ գայթակղութիւնները ծառայում են որպէս վկայութիւն մարդասէր Աստծու մեծ նախախնամութեան եւ հոգատարութեան։ Եւ ինչպէս կրակն է ոսկու համար, այդպէս էլ վիշտն է հոգու համար. այն ջնջում է կեղտը, դարձնում մաքուր, պայծառ ու պարզ։ Վիշտը տանում է դէպի Արքայութիւն, իսկ անհոգ կեանքը՝ դէպի Գեհեն... Հետեւաբար, պէտք չէ, որ մենք բոլոր միջոցներով ձգտենք միայն հանգիստ եւ անհոգ կեանքի, այլ թէ՛ բարեկեցութեան եւ թէ՛ մանաւանդ վշտերի մէջ պէտք է

սրտանց շնորհակալութիւն յայտնել Տիրոջը... Մենք մեծ օգուտ ենք ստանում վշտից նոյնիսկ յարութիւնից առաջ, քանի որ մեր հոգին դառնում է աւելի փորձուած, իմաստուն եւ խելամիտ՝ ազատուելով ամէն երկչոտութիւնից... Այն ամէնը, ինչ որ պատահում է, մեզ օգուտ է, եւ եթէ այդպիսի համոզմունք ունես, շուտով քեզանից կը քշես նոյնիսկ այն, ինչ դու անուանում ես քո դժբախտութիւնների գագաթնակէտը... Աստուած մեզ շատ է սիրում, եւ հետեւաբար, թոյլ է տալիս, որ մենք ենթարկուենք վշտերի, որպէսզի անկեղծօրէն կառչենք Իրենից: Ինչպէս մայրերը, զանազան հրեշներով վախեցնելով անհնազանդ երեխաներին, ստիպում են դիմել իրենց, եւ դա անում են ոչ թէ նրանց վշտացնելու, այլ իրենց կապելու համար, այնպէս էլ Աստուած միշտ ցանկանում է կապել մեզ Իրեն՝ որպէս սիրող Հայր: Նա, ով սիրում է, թոյլ է տալիս, որ ընկնես այդպիսի կարիքների մէջ, որպէսզի անընդհատ աղօթքով զբաղուես, անընդհատ կանչես Նրան եւ թողնելով ամէն ինչ՝ մտածես Նրա մասին»[1]*: Հետեւաբար, վշտերն ուղարկւում են բարիքի համար՝ ապաշխարելու, մաքրուելու, խոնարհուելու եւ Աստծու հանդէպ յոյսն ամրապնդելու համար: Խաչը հաւատացեալի համար ծառայում է որպէս սանդուղք երկրից դէպի երկինք: Երբ վշտերն ու չարչարանքները գալիս են, չվախենա՛նք ու չկարծե՛նք, թէ դրանք պատահական են գալիս, այլ թոյլ են տրւում Աստծու անհասկանալի նախախնամութեամբ: Նայենք ոչ թէ վշտին ու չարչարանքին, այլ դրանցից բխող օգուտին:*

*Քրիստոսի Խաչը դրախտի բանալին է: Խաչակրութիւնը բացեց դրախտը: Աւազակը խաչակրութեամբ դրախտ մտաւ: Որովհետեւ, թէեւ նա խաչուեց իր չար գործերի համար, սակայն սկսեց իր սրտում կարեկցել Քրիստոսին՝ ասելով. «**Մենք իրաւացիօրէն արժանի հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա որեւէ վատ բան չի արել**»*

1 https://svyatye.com/otcy/O-skorbi/3.html (առ 10/10/2023):

(Ղուկ. 23, 41)։ Եւ անմիջապէս լսեց Տիրոջից. «**Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ դրախտում կը լինես**» (Ղուկ. 23, 43) եւ նոյն ժամին խաչից դրախտ տեղափոխուեց։ Խորհելով այս մասին՝ Սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է. «Խաչի եւ դրախտի միջեւ ոչինչ չկայ, խոչընդոտներ կամ անհարմարութիւններ չկան, քանի որ դրանք արգելափակուած չեն մեծ պարսպով, բարձր, անանցանելի լեռներով, խորը խրամատներով կամ արագահոս գետերով, այլ դրախտը հէնց խաչի մօտ է։ Մենք չենք կասկածում, որ նա, ով Աստծու անուան սիրոյ համար ինչ-որ բանի է դիմանում, երախտագիտութեամբ է կանգնած դրախտի դռների առջեւ՝ խաչի եւ անմիջապէս դրախտի մօտ։ Այսպիսով, ինչ որ արեց Քրիստոսի խաչը, ստացաւ նաեւ աւազակի խաչը, այն է՝ Քրիստոսի չարչարանքները բացեցին դրախտը, իսկ աւազակի չարչարանքները նրան դրախտ տարան։ Երկուսի արարքը մեծ է ու փառաւոր»[1]։

Նոր կտակարանում մարմին բառն ամփոփում է մեր հին բնութեան բոլոր չար հակումները, որոնք պահպանւում են մեր մէջ նոյնիսկ այն բանից յետոյ, երբ մենք մահանում ենք Քրիստոսի հետ մկրտութեան ժամանակ (տես Գաղ. 5.16-22)։ Խաչակնքուելն արտայայտում է մեր որոշումը՝ խաչել մարմնի պիղծ ցանկութիւններն ու չար հակումները, եւ ապրել Հոգով։ Խաչակնքելով ցոյց ենք տալիս, որ մերկացնում ու թօթափում ենք մեր չար հակումները՝ պոռնկութիւնը, պղծութիւնը, յոռի կրքերը, չար ցանկութիւնը, ագահութիւնը, բարկութիւնը, զայրոյթը, չարութիւնը, հայհոյութիւնն ու խեղկատակութիւնը, եւ հագնում ենք նորը՝ սէրը, գութը, ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերատարութիւնը, որոնք նորոգուած են գիտութեամբ՝ ըստ Արարչի պատկերի (տե՛ս Կող. 3, 5-15)։

1 https://azbyka.ru/otechnik/prochee/sokrovishnitsa-duhovnoj-mudrost/ (աո 12/11/2023)։

Սբ. Յովհաննէս Կասիան Հռոմեացին *գրում է. «Մեր խաչը բաղկացած է Տիրոջ երկիւղից։ Հետեւաբար, ինչպէս խաչուած մարդը չի կարող շարժել իր վերջոյթները կամ շրջել դրանք այնպէս, ինչպէս ցանկանում է, այնպէս էլ մենք պէտք է մեր կամքն ու ցանկութիւններն ուղղենք ոչ թէ դէպի այն, ինչը հաճելի է մեզ եւ շողոքորթում է մեր ցանկութիւնները, այլ ըստ Տիրոջ օրէնքի՝ դէպի Նա, որի հետ խաչուեցինք։ Եւ ինչպէս խաչի վրայ գամուածը չի սգում ներկայի եւ իր կրքերի համար, չի մտածում վաղուայ մասին, չի ցանկանում ունեցուածքը, չի հպարտանում, չի վիճում, չի նախանձում, չի տրտմում իրականների համար, չի յիշում անցեալի վիրաւորանքները, այլ իրեն մեռած է համարում ամէն նիւթականի համար, մտածում է միայն այն մասին, թէ ուր կը գնայ մի քանի րոպէից։ Ուստի մենք, Տիրոջ երկիւղին գամուած, պէտք է մեռնենք ամէն ինչի, ոչ միայն մարմնական արատների, այլեւ աշխարհիկ ամէն ինչի համար։ Եւ մեր ամբողջ ուշադրութիւնը դարձնենք այն կողմը, թէ ուր կարող ենք տեղափոխուել ցանկացած պահի, քանի որ այդպիսով մենք կարող ենք սպանել մեր բոլոր [մեղաւոր] ցանկութիւններն ու մարմնական կրքերը»*[1]։

Սբ. Գրիգոր Նարեկացին *աղօթում է. «Վերացրո՛ւ ինձանից, աղաչում եմ Քեզ, Լուսաւոր Խաչովդ՝ խեղդը հանցանքիս... Կենաց Խաչիդ յաղթական սրով կտրատի՛ր բոլոր ցանցերը մարմնիս, որոնք ամենուր պաշարել են ինձ՝ մահու գերեալիս... Տէր Քրիստոս, Որդիդ Դու բարձրեալ եւ Մեծ Աստծու։ Պահե՛ս ու պահպանես երկնային զօրքիդ շրջափակութեամբ, բոլոր հողմերից ու խաբողների յարձակումներից՝ լուսեղէն Խաչովդ պաշտպանելով մեզ»։ Մեծ յուշարար է Սուրբ Հոգովդ տեառնագրելու Խաչիդ նշանը դէմքիս վրայ, կանխազեկոյց մի աւետաբեր սուրբ Թագաւորիդ փառքով գալստեան» (Բան*

1 https://azbyka.ru/otechnik/prochee/sokrovishnitsa-duhovnoj-mudrosti/139 (առ 12/11/2023):

Կ, Ե)։ Այսպիսով, անկախ նրանից, թէ որքան ուժգին ենք գայթակղւում, մենք կարող ենք հպուել խաչի նշանին, որպէսզի ազդու կերպով գործադրենք Քրիստոսով մեր ազատութիւնը եւ յաղթենք նոյնիսկ մեր ծանր մեղքերին ու յանցանքներին։ Ուստի, խաչի նշանը մեր վրայ դրոշմելով՝ ազդարարենք, որ մեզ հետ պատահած ոչիչն չի կարող վշտացնել մեզ եթէ մենք բուռն ու ջերմեռանդ աղօթենք եւ դրա միջոցո՛վ ազատուենք այն ամէնից, ինչ որ պատահում է մեզ։

Խաչակնքումը՝ որպէս հզօր զէնք ու վահան ընդդէմ սատանայական ազդեցութիւնների

Երբ խաչակնքում ենք, մեր վրայ յարձակուող դեւերը սարսափահար փախչում են։ Եփրեմ Խուրի Ասորին ասում է. «Եկեղեցու Հայրերը սատանայի դէմ պատերազմելու հետեւալ միջոցներն են մատնանշում. հաւատ, Աստծու խօսք, Քրիստոս Յիսուսի անունը եւ տեառնագրումը... Տեսէ՛ք նեռի խորամանկութիւնը. նա իր իշխանութեան տակ գտնուող բոլոր մարդկանց աջ ձեռքին եւ ճակատին իր կնիքը պէտք է դնի, որպէսզի մարդն այլեւս չկարողանայ խաչակնքուել, ինչպէս սովորաբար անում են աջ ձեռքով սկսելով, նախ ճակատին դնելով, որի ժամանակ Տիրոջ անունն ենք տալիս, որովհետեւ անօրէնը՝ [սատանան], գիտի, որ Խաչի նշանը քանդում է իր ամբողջ զօրութիւնը... Երբէք մի՛ մոռացիր քեզ Խաչով պարսպել, եւ կը քանդես քեզ համար չարի լարած բոլոր որոգայթները։ Մշտապէս քեզ խաչակնքի՛ր Խաչի նշանով, եւ չարը չի մօտենայ քո հոգուն»[1]։

Սբ. Աթանաս Աղէքսանդրացին *գրում է, որ նախքան Քրիստոսի գալուստը դիւային զօրութիւնները խաբում էին հեթանոսներին՝ երկրպագելու եւ հնազանդուելու նրանց պատգամներին, «բայց հիմա Խօսքի (Քրիստոսի) աստուածային յայտնութիւնից ի վեր այս ողջ խաբէութիւնը վերջացաւ։ Որովհետեւ Խաչի նշանով, եթէ միայն մարդն այն օգտագործում է, նրանց խաբէութիւնները դուրս են մղւում»*[2]։ Սբ. Աթանաս Մեծն ասում է. «Խաչի յայտնուելով ոչնչացւում

1 https://azbyka.ru/otechnik/prochee/sokrovishnitsa-duhovnoj-mudrosti/139 (առ 1/10/2023):

2 https://www.goodcatholic.com/five-things-you-should-know-about-the-sign-of-the-cross/ (առ 1/10/2023):

է ամբողջ կռապաշտութիւնը, եւ խաչի նշանով քշում է ամէն մի դիւային երազ...»[1]:

Սիմէօն Նոր Աստուածաբանն *ասում է. «Խաչի պատկերը ցոյց է տալիս հաշտութիւնն ու ընկերակցութիւնը, որով մարդը հաղորդակցւում է Աստծու հետ: Ուստի դեւերը նոյնպէս սարսափում են խաչի պատկերից եւ նոյնիսկ չեն կարող հանդուրժել օդում պատկերուած խաչի նշանը տեսնել, այլ անմիջապէս փախչում են նրանից՝ իմանալով, որ խաչն Աստծու հետ մարդկանց ընկերակցութեան նշանն է, եւ որ նրանք՝ դեւերը, հաւատուրացներ եւ Աստծու թշնամիներն են՝ հեռացուած Նրա աստուածային դէմքից, ովքեր այլեւս չունեն ազատութիւն՝ մօտենալու նրանց, ովքեր հաշտուել են Աստծու հետ եւ միաւորուել Նրա հետ... Եթէ, այնուամենայնիւ, թւում է, թէ նրանք գայթակղում են որոշ քրիստոնեաների, ուրեմն թող բոլորն իմանան, որ կռւում են նրանց հետ, ովքեր պատշաճ կերպով չեն իմացել խաչի վսեմ խորհուրդը: Նրանք, ովքեր հասկացան այս հաղորդակցութիւնը եւ իրականում զգացին այն զօրութիւնը, որ խաչն ունի դեւերի դէմ, սովորեցին նաեւ, որ խաչը հոգուն տալիս է ուժ, իշխանութիւն, իմաստ եւ աստուածային իմաստութիւն: Նրանք մեծ ուրախութեամբ բացականչում են. «**Մակայն քա՛ւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչուած է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար**» (Գաղ. 6, 14)»*[2]:

Երբ սատանան տեսաւ, թէ ինչպէս է Յիսուս մահանում խաչի վրայ, նա սխալմամբ կարծեց, որ մեծ յաղթանակ է տարել: Փոխարէնը Տէրը զարմացրեց նրան խայտառակ պարտութեամբ (տե՛ս Ա. Կորնթ. 2.8): Զատկի առաջին առա-

1 https://azbyka.ru/otechnik/prochee/sokrovishnitsa-duhovnoj-mudrosti/139 (առ 1/10/2023):

2 Նոյն տեղում:

ւօտից մինչեւ այսօր Խաչի նշանը սատանային ստիպում է թաքնուել ու փախչել։ Այսպիսով, մի կողմից խաչակնքումը պաշտպանական քայլ է, որը յայտնում է մեր անձեռնմխելիութեան մասին ընդդէմ սատանայի ազդեցութեան, բայց որ աւելի կարեւոր է, խաչակնքումը նաեւ յարձակողական զէնք է, որն օգնում է մեզ Քրիստոսի հետ վերականգնել այն ամէնը, ինչը սատանան կորցրեց Խաչի շնորհիւ։ Խաչակնքուելով մենք յայտարարում ենք մեր պատկանելութիւնը Խաչեալ Յիսուսին Աստծու արքայութեան աննկուն առաջխաղացման համար՝ ընդդէմ խաւարի թագաւորութեան։ Հետեւաբար, երբ խաչակնքուենք մեզ պաշտպանելու համար չարի դէմ, հաւատանք, որ խաչակնքուելով մենք կապւում ենք մեր Արարչին ու անպարտելի դառնում սատանայի դէմ մեր պայքարում։

Խաչակնքուելիս իւրաքանչիւր գործի սկզբին եւ աւարտին մենք կամենում ենք մեր համաձայնութիւնն ու գոհացումը յայտնել Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքին. ***«Եւ ինչ որ անէք խօսքով եւ գործով, բոլորն արէ՛ք Տէր Յիսուսի անունով. գոհութի՛ւն մատուցէք նրանով Աստծուն եւ Հօրը»*** *(Կող. 3, 17)։ Խաչակնքուելով ու մեր ներքին մարդու մէջ հաստատելով Տիրոջ օրհնութիւնները՝ միշտ պէտք է յիշենք եւ անդրադառնանք Խաչի կնիքն ընդունելու խորհրդին եւ իմաստին, որպէսզի սրբազան գործողութիւնը չվերածուի ձեւական երեւոյթի եւ անհոգի սովորութեան։*

Խաչի նշանը դրոշմում ենք մեր մարմնի չորս կողմերի վրայ, որպէսզի նա մեզ պաշտպանի չորս վտանգներից՝ աշխարհի փորձութիւններից, սատանայի յարձակումներից, անհաւատների գայթակղութիւններից ու մեղքերի պղծութիւնից։ Որպէսզի ազատուենք դիւական զօրութիւններից, պէտք է յաճախ խաչակնքուենք։ Տեառնագրումը վահան է ընդդէմ սատանայական ազդեցութիւնների։

Սբ. Յովհան Ոսկեբերանն *ասում է. «Խաչը մեր փրկութեան դրոշն է, մեր Տիրակալի ողորմութիւնը, որ մեզ համար մունջ ոչխարի պէս մորթուելու տարուեց (Ես. 53, 7)։ Այդ պատճառով, երբ խաչակնքուես, պատկերացրո՛ւ Խաչի ամբողջ նշանակութիւնը, որ մարեն բարկութիւնդ ու մնացած մոլորութիւններդ։ Երբ խաչակնքւում ես, թող քո դեմքին դրանով արտայայտուի կենդանի վստահութիւնը, իսկ հոգիդ ազատագրուի, ու ո՛չ միայն մատներով պատկերուի Խաչի նշանը, այլեւ դրան թող նախորդի սրտի բարեհաճութիւնն ու լի հաւատը։ Եթէ այդպէս դէմքի վրայ պատկերես Խաչի նշանը, ապա ոչ մի պիղծ ոգի ու չար զօրութիւն չեն կարող քեզ մօտենալ՝ տեսնելով այդ սուրը, որով նա խոցուել է ու մահացու վէրք ստացել։ Որովհետեւ ինչպէս մենք ենք վախով նայում այն գործիքներին, որոնցով մահապատժի են ենթարկւում յանցագործները, ապա պատկերացրո՛ւ, թէ ինչպէ՛ս են դողում սատանան ու դեւերը՝ տեսնելով այն զէնքը, որով Քրիստոս Տէրը ցրեց նրանց զօրութիւնը ու կտրեց սատանայի գլուխը։ Եւ այսպէս, մի՛ ամաչիր այդ մեծ բարութիւնից, ու քեզ չի ամաչեցնի Յիսուսը, երբ Իր փառքով վերադառնայ ու այդ նոյն Խաչի նշանը արեւից էլ պայծառ պիտի երեւայ Իր գալուստից առաջ (Մատթ. 24, 30)։ Եւ այսպէս, Խաչը պատկերի՛ր նախ մտքիդ եւ հոգուդ վրայ, քանի որ երբ Խաչը մեզ հետ է, ապա դեւերը սարսափելի ու վտանգաւոր չեն. իսկ մահը մահ չէ, այլ՝ քուն։ Խաչով բոլոր թշնամիները պարտուած ու կոխկռտուած են։ Ուստի Խաչը մեր պարծանքն է, բոլոր բարիքների սկիզբը, մեր համարձակութիւնն ու զարդարանքը»*[1]։

Սբ. Եփրեմ Ասորին *ասում է. «Դռների, ճակատի, շուրթերի եւ մեր իւրաքանչիւր անդամի վրայ դչոշմե՛նք կենարար Խաչի նշանը եւ զինուե՛նք քրիստոնէական այս անպարտելի զէնքով,*

1 Նոյն տեղում։

մահուան նկատմամբ յաղթականով, հաւատացեալների յոսով։ Այս զէնքը, որը բացում է դրախտը, տապալում է հերետիկոսութիւնները, հաւատքի այս հաստատումը, ուղղափառների, քրիստոնեաների մեծ շտեմարանը եւ փրկարար գովասանքը, մեզ հետ կը տանենք ամենուր, օր ու գիշեր, ամէն ժամ եւ ամէն վայրկեան։ Առանց դրա ոչինչ մի՛ արէք. բայց եթէ դու քնում ես, քնից վեր ես կենում, աշխատում ես, ուտում, խմում, ճամփայ ես ելնում, ծովով նաւարկում, գետն անցնում, բոլոր անդամներդ զարդարի՛ր կեանք տուող խաչով... Նոյնիսկ սատանան ինքն իր ողջ իշխանութեամբ սարսափում է խաչի նշանից, երբ այն մեր կողմից գծագրւում է նրա դէմ»[1]։

Անտոն Մեծն ասում է. «Եթէ քեզ մի հրեշտակ հանդիպի եւ ասի թէ հրեշտակ է, ասա՛ իրեն՝ թող խաչակնքուի, քանի որ դեւերը չեն հանդուրժում խաչի նշանը։ Երբէք մի՛ մոռացիր քեզ պարսպել խաչով. դրանով քանդում ես չարի՝ քեզ համար լարուած բոլոր որոգայթները։ Մշտապէս քեզ խաչակնքի՛ր խաչի նշանով, ու չարը չի մօտենայ քո հոգուն»[2]։

Հայր Յովհաննէս Կրոնշտադցին գրում է. «Անհասանելի է մեր մտքերին, թէ ինչպէ՛ս է Ինքը՝ Յիսուս Քրիստոս, միանում խաչի նշանին եւ հրաշագործ զօրութիւն տալիս՝ վանելու դիւական կրքերը եւ հանդարտեցնելու խռովուած հոգին։ Ճիշդ այդպէս էլ անհասկանալի է, թէ ինչպէ՛ս է մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հոգին միանում հացին եւ գինուն, վերածելով Մարմնի եւ Արեան, որոնցով մեր հոգիները ճշմարտապէս մաքրւում են մեղքերից՝ ներարկելով երկնային խաղաղութիւն եւ անդորրութիւն։ Եւ որպէսզի տկար հաւատք ունեցողները չմտածեն, որ խաչն ու Յիսուսի անունը հրաշագործում են

1 https://azbyka.ru/otechnik/prochee/sokrovishnitsa-duhovnoj-mudrosti/139 (առ 1/10/2023):

2 On the Holy Spirit, ch. 27.

իրենք իրենց, այլ ոչ թէ Քրիստոսով, նոյն խաչն ու անունը հրաշագործութիւններ չեն անում, մինչեւ որ հոգու աչքերով չտեսնեն եւ ամբողջ սրտով չհաւատան այն ամէնին, ինչ Նա արել է մեր փրկութեան համար»[1]:

Սբ. Յովհան Ոսկեբերանն *ասում է. «Երբ խաչակնքւում ես, մտածի՛ր խաչի ահաւոր զօրութեան մասին եւ հանգցրո՛ւ բարկութիւնդ ու մնացած մոլութիւններդ: Երբ խաչակնքւում ես, հոգիդ թող ազատագրուի, իսկ դէմքդ համարձակութիւնով լցուի: Խաչը միայն մատներով պէտք է չպատկերուի, այլ դրանից առաջ ամուր հաւատի կամքով հաստատուի: Եւ եթէ դու այդպէս խաչակնքուես, ոչ մի պիղծ ոգի չի կարող քեզ մօտ կանգնել, որովհետեւ նա կը տեսնի մի սուր, որն իրեն մահացու հարուած է տուել: Երբ մենք տեսնում ենք մահապարտների կառափնարանն ու դողում ենք վախից, մտածի՛ր, թէ ինչպէս են տանջւում սատանան ու դեւերը՝ տեսնելով այն զէնքը, որով Քրիստոս յաղթեց նրանց ամբողջ զօրութեանը, կտրեց հին օձի գլուխը: Ու դու մի՛ ամաչիր այդքան զօրաւոր խաչից, որ Քրիստոս էլ քեզ համար չամաչի վկայել, երբ գա Իր փառքով, երբ Իր առջեւից երեայ խաչի նշանը՝ աւելի պայծառ, քան արեւի ճառագայթները: Այդ նշանով բացուեցին դժոխքի դռները, ոչնչացուեց թոյնի զօրութիւնը, քանզի այդ խաչը մոլորակը փրկեց, հեռացրեց մոլորութիւնը, վերադարձրեց ճշմարտութիւնը եւ երկրից երկինք դարձրեց, մարդկանցից՝ հրեշտակներ: Խաչի պատճառով դեւերն այլեւս սարսափելի չեն եւ արժանի են արհամարհանքի: Նրանով մահն այլեւս մահ չէ, այլ երկարատեւ քուն, եւ մեր վրայ իշխող ամէն մի զօրութիւն ոտնատակ է արուած»[2]:*

1 https://www.hamburg-hram.de/ioann/tom1/slovo-61.html (առ 10/10/2023):

2 http://ararat-miutyun.blogspot.com/2013/09/blog-post_11.html (առ 10/10/2023):

Խաչակնքումս ու Աստծու Գառնուկի Արիւնը

*Ամէն անգամ, երբ խաչակնքում ենք հաւատքով, մենք ներկւում ու ծածկւում ենք Գառնուկի Արեամբ: Յաղթանակի այս նշանը մեզ պարուրում է Աստծու փրկարար զօրութեամբ, որը նախանշուած էր դեռեւս Ելից գրքում: Աստուած պատրաստում էր հարուածել Եգիպտոսի երկրին. «**Թող վերցնեն նրա արիւնից ու քսեն այն տան դռան սեմին երկու տեղ ու դռան շրջանակի վերեւը այն տան, ուր այն ուտելու են: Եւ նշուած արիւնը այն տների վրայ, ուր ուտելու էք, թող ձեզ նշան լինի: Ես, տեսնելով այդ արիւնը, պիտի խնայեմ ձեզ, եւ ձեր գլխին չեն իջնի մահաբեր այն հարուածները, որոնցով պիտի պատուհասեմ Եգիպտացիների երկիրը**» (Ելք 12, 5-6. 13): Գառան արիւնը դռան սեմին քսելն իսրայէլացիների համար փրկուելու բանալին էր: Այն իսրայէլացիները, ովքեր գառան արիւնը քսեցին իրենց դռների սեմին, պարզապէս մտան արեան ուխտի մէջ: Նրանց խնայեցին ոչ թէ իրենց բարի գործերի, այլ արեան պատճառով:*

*Երբ զինուորներից մէկը գեղարդով խոցեց Յիսուսի կողը, շուտով արիւն ու ջուր հոսեց (Յովհ. 19, 34): Պօղոս առաքեալն ասում է. «**Աստուածութեան լրիւ ամբողջութիւնը Նրա՛ մէջ հաճեց բնակուել եւ Նրանո՛վ հաշտեցնել ամէն ինչ իր հետ՝ խաղաղութիւն անելով խաչի վրայ թափած Իր արեամբ ե՛ւ երկրի վրայ, ե՛ւ երկնքում եղածների համար**» (Կող. 1, 20-21): Տիրոջ անարատ Արիւնը՝ որպէս Նոր ուխտի նշան, ծորում էր Կենաց փայտի վրայից՝ այն կնքելով եւ սրբացնելով, ու փայտէ խաչը, որի վրայ գամուած էր Քրիստոս դառնում է Նրա բնակարանը եւ սրբագործւում Նրա Արեամբ: Խաչը դառնում է սիրոյ եւ փրկութեան խորհուրդը՝ մեզ արտոնելով հաղորդակցութեան*

մէջ մտնել Աստծու հետ։ Տէր Յիսուս ասաց. «**Դա է Նոր ուխտի իմ Արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար**» (Եփես. 12, 7)։ Այս խօսքով Յիսուս ներկայացնում է Իրեն՝ որպէս ճշմարիտ ու վերջնական զոհ, որով իրականանում է մեղքերի քաւութիւնը ու Նոր ուխտի հաստատումը։ Խաչակնքուելով մենք վկայակոչում ենք Քրիստոսի Արեան մէջ եղող Նոր ուխտի խորհուրդը։ Խաչակնքուելով մենք երկրպագում ենք Քրիստոսի Խաչին, որի օրհնութեամբ եւ օծութեամբ աստուածային զօրութիւնն ու շնորհն իջնում են հաւատացեալների վրայ։ Ձեռքերի տեսանելի շարժմամբ պատկերելով Խաչի նշանը՝ խորհրդաւոր կերպով մենք Քրիստոսի Արիւնն ենք քսում մեր վրայ եւ այդպէս պաշտպանւում չարից ու յաւիտենական մահից։

Դուռը թուլութեան տեղ է պատի մէջ։ Երբ մարդիկ ցանկանում են յարձակուել որեւէ թագաւորութեան վրայ, անկախ այն բանից, թէ որքան ամուր են պատերը, նրանք սովորաբար կոտրում են դուռը կամ դարպասը, քանի որ թշնամիների համար այդտեղից է ամենահեշտը մուտք գործել։ Ուստի Աստուած պատուիրեց իսրայէլացիներին գառան արիւն քսել դռների սեմին, այսինքն՝ թոյլ վայրում։ Նմանապէս մենք պէտք է խաչը սրբացնող Արեան խորհուրդը տարածենք մեր թուլութիւնների վրայ։ Օրինակ՝ եթէ դուք ամբարտաւան կամ ցանկասէր էք, ապա խաչակնքուելով խնդրէ՛ք Տիրոջը, որ ների եւ ազատի ձեզ, եւ ապա որոշէք, որ դուք Յիսուսի Արեան խորհուրդը ներգրաւէք թուլութեան այդ մասում։ Խաչակնքուելով մենք Յիսուսի Արիւնն ենք խորհրդաւոր կերպով քսում մեր մարմնի թուլութեան տեղերին, որպէսզի թշնամին չօգտուի մեզանից, եւ երբ գայթակղութիւնը գայ, Յիսուսի Արիւնը մեզ փրկի ու պաշտպանի մեր կեանքի ու հոգու դարպասները։

Փրկութեան այս Նշանը մեր մարմնի վրայ տեառնագրելը

յայտարարում է բոլոր սկզբունքների եւ խաւարի ուժերի կործանման մասին, թէ Աստուած Ինքն է ներգրաւուել մեր ողբերգութեան մէջ՝ յիշեցնելով, որ մենք երբէք մենակ չենք՝ անկախ այն հանգամանքից, թէ որքան դժուար փորձութիւնների ու հալածանքների կը բախուենք: Յոյսի Նշանով խաչակնքուելը թարմացնում է մեր հաւատքը: Յիսուսի Արեան փրկարար զօրութիւնն այնպիսին է, որ որքան էլ ուժգին ու սաստիկ պայքար լինի թէ՛ երկնքում եւ թէ՛ երկրի վրայ, ոչ մի չար կամ անտրամաբանական ուժ չի կարող յաղթահարել Աստծու սէրն ու ողորմութիւնը: Խաչակնքուելով նորոգւում ենք Յիսուսի Արեամբ, որով կրկին ծածկւում են մեր սրտերի եւ հոգիների դռները, որպէսզի մահուան ժամանակ ճանաչուենք Յաւիտենական կեանքի՝ Քրիստոսի կողմից:

Ընդունելով անտեսանելի, անմարմին, անպատկերելի, անորակելի եւ անչափելի աստուածային զօրութեան կնիքը՝ ձեռքերի տեսանելի շարժմամբ այս ողորկ մարմնի վրայ պատկերում ենք Նրան, ով կամեցաւ յանձն առնել ծառայի կերպարանքը, տեսանելի դառնալ ու սահմանափակուել մարդկային մարմնի մէջ: Սա տեսնելով՝ դեւերը դողում ու սարսափում են, երբ մարդ կարողանում է զգալ Իր Տիրոջ ներկայութիւնը եւ ներկայացնել Նրան, ով Իր էութեան գերազանցութեան պատճառով գերիվեր է բոլոր մեծութիւններից: Մենք ծածկուած ու պաշտպանուած ենք Յիսուսի Արեամբ: Նրա մէջ բեւեռուած Քրիստոսի զօրութիւնն անբաժանելի է Խաչից, քանզի ուր Խաչն է, այնտեղ է Խաչեալը, եւ ուր Խաչն ու Խաչեալն են՝ այնտեղ է խաչելութիւնը:

Խաչակնքուելով մենք պաշտամունք եւ երկրպագութիւն ենք մատուցում Աստծու զօրութեանը, որ անբաժանելիօրէն միաձուլուած է Նրա հետ: Զարն այլեւս զօրութիւն չունի, քանզի Յիսուս խաչուեց մեզ համար, եւ Խաչեալի Արեամբ մենք փրկուեցին: Խաչակնքուելով հաստատում ենք մեզ Խաչի

հովանու տակ, որի վրայ մահացաւ մեր Տէրը։ Հետեւաբար, Սուրբ Խաչի առջեւ խոնարհուելը, խաչակնքուելը, երկրպագելը եւ համբուրելը նշանակում են մեր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին սիրել ու պաշտել։ Ուստի եւ մենք պարծենում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի Խաչով եւ պաշտում ու երկրպագում ենք Խաչեալին՝ Խաչի հետ միասին։

Խաչակնքուելով մարդկանց առջեւ՝ Քրիստոսին ենք դաւանում

Խաչակնքումը ծառայում է Աւետարանի լուռ քարոզչութեանը: Չէ՞ որ Քրիստոսի Աւետարանը կարելի է քարոզել տարբեր եղանակներով՝ երգով, անձնական օրինակով ու գործերով, բերանացի քարոզչութեամբ, գրքերով, հեռուստացոյցի, ձայնասփիւռի, համակարգչի կամ այլ զանազան միջոցներով: Խաչակնքումը կարող է դիտուել որպէս հաւատացեալի նուիրուածութեան եւ լուռ քարոզչութեան հրապարակային ցուցադրում, որը յաճախ լաւ է յիշւում եւ կարող է տպաւորիչ ազդեցութիւն ունենալ մարդու վրայ: Խաչակնքումը յիշեցնում է Աստծուն ու մարդկանց մէջ կարող է արթնացնել կրօնական հաւատաբուխ զգացումներ: Խաչակնքումն ամրացնում է աստուածապաշտական մտքերն ու քրիստոսահաճոյ հոգեւոր կեանքը:

Ժամանակակից հոգեբանները յայտնաբերել են, թէ մարդու աչքերի ջիղերի բջիջներն ու անօթները քսանհինգ անգամ աւելի հաստ են, քան ականջներինը: Հետեւաբար, ինչ որ մենք տեսնում ենք, յիշում ենք քսանհինգ անգամ աւելի լաւ, քան ինչ որ լսում ենք: Ժողովրդական առածն էլ ասում է. «Աւելի լաւ է մէկ անգամ տեսնել, քան թէ հարիւր անգամ լսել»: Ինչո՞ւ Քրիստոսի Աւետարանը չքարոզել մարդկային սրբազգաց խաչակնքման միջոցով, որը (եթէ հասկանալով է կատարւում եւ ոչ ձեւականօրէն) մարդկային հոգին վեհացնում է՝ հաւատի եւ երկրպագութեան մթնոլորտի մէջ աւելի ազդու փառաբանելու իր Տէր Աստծուն: Իսկ եթէ մարմնի անդամներն ու զգայարանները ենթարկւում են Աստծու խօսքով լուսաւորուած մտքին, ապա, այդպիսի

անձն Աստծու շնորհով մաքրագործուած լինելով՝ ամէն բան շնորհալի պարզութեամբ է տեսնում՝ առանց աշխարհի մեղսալի արարքների մէջ ընկնելու։ Իր ձեռքերն ու աչքերը հետեւում են մտքին, տեսնում երկնային իմանալի աշխարհն ու հոգեւոր ճշմարտութիւնները։ Սբ. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Երբ աչքը հետեւում է մտքին, մարդն ուղղւում է, քանի որ աչքը երկրաւոր է եւ երկիրն է տեսնու, իսկ միտքը՝ երկնայինները։ Երբ միտքը վերինն է խորհում, հոգին նրան է հետեւում. նաեւ շունչն ու արիւնը՝ նրան կապուած. այլեւ մարմինն ու զգայարանները՝ նրանց հետեւելով։ Եւ մարդը դառնում է երկնային»[1]։

Ոմանք երբեմն չեն խաչակնքւում ամօթի պատճառով։ Ամօթի պատճառով չխաչակնքուելը՝ Քրիստոսին ուրանալ է նշանակում։ Իսկ նա, ով ուրանում է Քրիստին մարդկանց առջեւ, Քրիստոս էլ նրան պիտի ուրանայ մեր երկնաւոր Հօր առջեւ (Մատթ. 10, 33)։ Մեր ժամանակներում բարեպաշտ մարդիկ սրբօրէն պահպանում են հին քրիստոնէական աւանդութիւնը՝ առանց աղօթքի եւ խաչակնքուելու ոչ մի բարի, օգտակար կամ ոչ դատապարտելի գործ չեն անում։ Յաւօք, ոչ բոլորն են ընդօրինակում հին ու ժամանակակից բարեպաշտութեան օրինակը՝ կա՛մ ծուլութիւնից ու ցրուածութիւնից, կա՛մ կեղծ ամօթից։ Առաջին դէպքում խաչակնքուելուց խուսափելը սովորաբար կապուած չէ աղօթքի հանդէպ հակուածութեան հետ, եւ, հետեւաբար, դա նոյնքան դատապարտելի է, որքան ինքնին այս հակուածութիւնը, որը գալիս է աշխարհիկ ունայնութիւնների հետ չափից աւելի դուրս կապուածութիւնից եւ հպարտութիւնից, ինչը նշանակում է, թէ չի ուզում մտածել Աստծուց մեր ամէն ինչում մեր կախուածութեան մասին։ Երկրորդ դէպքում քրիստոնեաները շեղւում են

1 **Սբ. Գրիգոր Տաթեւացի**, «Համառօտ լուծմունք դժուարիմացնութիւն գրոց Յոբայ», Գանձասար, Գ հատոր, Երեւան, 1991, էջ 322։

բարեպաշտ սովորութիւնից, քանի որ այն ընդունուած չէ, այսպէս կոչուած, «քաղաքակիրթ» հասարակութեան մէջ։ Հետեւաբար, չցանկանալով ետ մնալ «քաղաքակիրթ» հասարակութիւնից՝ նրանք քիչ են խաչակնքւում եկեղեցում կամ էլ ընդհանրապէս չեն խաչակնքւում եկեղեցի մտնելիս եւ եկեղեցու մօտով անցնելիս սեղանի շուրջ հաց ուտելիս, եւ այլ առիթներով։ Բայց կրթուած մարդը երբէք չի դատապարտում իր մերձաւորին՝ բարեպաշտ սովորութեանը հետեւելու համար, իսկ այդպիսի հասարակութիւնը, որտեղ նման սովորութիւններն անընդունելի են կամ անտանելի, հազիւ թէ կարելի է կրթուած անուանել։ Եթէ ինչ-որ տեղ իսկապէս տիրեր նման անհանդուրժողականութիւն, ապա բարեպաշտութեանն իսկապէս նախանձախնդիր քրիստոնեան չէր ենթարկուի այդ հասարակութեան պահանջներին։ Նա աւելի շուտ կը համաձայնի ենթարկուել անլուրջ բամբասանքներին եւ ամէն չար խօսքին, քան թէ դաւաճանել խաչուած Տիրոջը՝ ամէն առիթով խոստովանելով բարեպաշտ սովորութեանը թէ՛ խօսքով, թէ՛ խաչի նշանով, եւ երբէք չի ամաչի այդ խոստովանութիւնից։

Ըստ Եկեղեցու նախնի վարդապետների՝ ոմանք արդէն կամովին ընդունում են նեռի կնիքն իրենց ճակատների ու ձեռքերի վրայ, քանի որ մարմնաւոր պարկեշտութեան եւ աշխարհիկ բարիքների համար նրանք ամաչում են պաշտպանուել խաչի նշանով։ Սկզբում հասարակութեան մէջ գուցէ խաչակնքւում են ի սէր մարդահաճութեան, բայց յետոյ սովորութեան համաձայն չեն խաչակնքւում, եւ ադպիսով ստեղծում են մեծ ուրախութիւն հոգու թշնամիների համար, որոնց համար նրանք, պաշտպանուած չլինելով խաչի եւ աղօթքի զօրութեամբ, դառնում են խամաճիկ ու ծիծաղի առարկայ։ Պէտք չէ ամաչել խաչից, այլ պէտք է ամաչել անաստուածութիւնից։ Պօղոս առաքեալն ասում է, թէ խաչի

քարոզութիւնն Աստծու զօրութիւնն է (տե՛ս Ա. Կորնթ. 1, 18)։ Խաչն ունի ահաւոր մեծ զօրութիւն, որովհետեւ շաղախուած է Քրիստոսի անմեղ ու մաքուր Արեամբը։ Երբ մենք տեառնագրում ենք մեր մարմինները, մեր վրայ ենք դրոշմում Խաչի նշանը, եւ այդ Խաչն անտեսանելիօրէն մնում է մեր վրայ։ Մենք մեր աչքերով չենք տեսնում, բայց դեւերն ու պիղծ ոգիները տեսնում են դա ու սարսափահար փախչում մեանից։

Սբ. Յովհան Ոսկեբերանն *ասում է. «Ոչ ոք թող չամաչի Խաչի նշանից, որը բոլոր բարիքների աղբիւրն է, որի շնորհիւ կանք ու ապրում ենք եւ կրե՛նք այն, ինչպէս փառքի պսակ, քանզի մեր բոլոր խորհուրդները, եթէ վերստին ծնուել է պէտք, եթէ Երկնային Հաց ենք ուզում ճաշակել, եթէ ուզում ենք ձեռնադրել, ամէն տեղ այդ Նշանն է դրւում ու նրանով են իրականանում... Հետեւաբար, մի՛ ամաչիր այդ մեծ բարութիւնից, ու քեզ չի ամաչեցնի Յիսուսը, երբ Իր փառքով վերադառնայ, ու այդ նոյն Խաչի նշանը արեւից էլ պայծառ պիտի երեւայ Իր գալուստից առաջ... Եւ այսպէս, պատկերի՛ր Խաչը նախ մտքիդ եւ հոգուդ վրայ, քանզի երբ Խաչը մեզ հետ է, ապա դեւերը սարսափելի ու վտանգաւոր չեն, իսկ մահը մահ չէ, այլ քուն։ Խաչով բոլոր թշնամիները պարտուած ու կոխկռտուած են։ Այդ պատճառով Խաչը մեր պարծանքն է, բոլոր բարիքների սկիզբը, մեր համարձակութիւնն ու զարդարանքը»*[1]։ *Խաչի նշանի կնիքն ենք դրոշմում մեր մարմինների վրայ՝ որպէս Աստծու առաջ մեր համարձակութեան նշան։ Ուստի սա երբէք մեզ համար ամօթ չէ, այլ պարծանքների պարծանքն է, քանի որ Աստծու զորութեամբ է մեր փրկութիւնը։*

Սբ. Կիւրեղ Աղէքսանդրացին *ասում է. «Այսուհետ ամօթ մի՛ համարէք Քրիստոսի Խաչը, այլ թէպէտեւ մէկը թաքցնի, դու*

1 https://arheve.org/read/ioann-zlatoust/o-tom-chto-ne-dolno-styditsya-proslavlyat-krest/2831 (առ 10/11/2023):

յայտնապէս ճակատիդ դի՛ր Խաչի նշանը, որովհետեւ դեւերը, տեսնելով արքայական այդ նշանը, սարսռում են, դողում եւ փախստական դառնում։ Բայց դու դրոշմի՛ր [Խաչի] նշանը ամէն ժամանակ, երբ ուտում ես, խմում, եւ ամէն առիթով՝ թէ՛ նստելիս, թէ՛ կանգնելիս, թէ՛ քայլելիս եւ թէ՛ անկողին մտնելիս»[1]*։*

*Խաչակնքուելով մենք ցանկանում ենք, որ այսուհետ մեր վրայ իշխի Յիսուսը՝ այն էլ՝ Խաչը ելած (տե՛ս Ա. Կորնթ. 2, 2)։ Ցանկանում ենք, որ այսուհետ մեզ նայելիս տեսնեն միայն մի բան՝ Խաչեալ Յիսուսին որդեգրութիւնը։ Խաչակնքուելով մենք բոլորի առջեւ յայտարարում ենք, որ Յիսուս մեզ համար խաչուեց, իսկ մենք Նրա հետեւորդներն ենք եւ պատկանում ենք Խաչեալին։ Խաչի նշանով դրոշմում ենք մեր մարմինը, քանի որ միշտ ի մտի ունենք Խաչեալին, ինչպէս Եզեկիէլ մարգարէն է ասում. «**Նշա՛ն դիր այն մարդկանց ճակատին**» (Եզեկ. 9, 4)։ Խաչակնքուելն այն խորհրդապաշտական շարժումն է, որով դաւանում ենք Քրիստոսին՝ որպէս մեր Տիրոջ ու Փրկչի, քանի որ Իր խաչելութեամբ խափանեց բռնութիւնն, ու խորտակեց հակառակորդի զօրութիւնները։ Խաչափայտի վրայ Նա փրկեց, մեզ եւ Խաչի նշանի զօրութեամբ մենք պաշտպանւում ենք սատանայի ներգործութիւնից։ Խաչի նշանով ենք պարսպւում՝ Աստծու շնորհը հրաւիրելու համար։ Խաչակնքում ենք նաեւ, որպէսզի չար թշնամին՝ սատանան, սա տեսնի եւ ահաբեկուի։ Ինչպէս որ չարը վախենում է Յիսուս Քրիստոսից, այնպէս էլ վախենում է Քրիստոսի նշանից՝ Խաչից։ Խաչը թշնամու դէմ ամենաապահով զէնքն է եւ նրա դէմ ամենաուժեղ պաշտպանութիւնը։ Խաչի նշանով պատսպարուել նշանակում է Քրիստոսի զօրութեամբ պաշտպանուել չարի բոլոր յարձակումներից։*

1 http://mail.armenianhouse.org/babajanyan/cross-am/3.html (աղ 10/11/2023):

Դեւերը փախչում են Խաչի նշանից, իսկ հրեշտակները թռչում են դէպի Խաչը։ Խաչակնքուելով հրեշտակները տեսնում են, թէ նրանք ո՛ւմ պէտք է պաշտպանեն ու հսկեն, իսկ չար ոգիները տեսնում են, թէ ումի՛ց պէտք է փախչեն։ Ուստի ուշադրութեամբ Խաչի նշանը վահան մեր վրայ դրոշմե՛նք, որն ինչպէս սուրը հարուածում է թշնամուն։ Մենք խաչակնքւում ենք նաեւ, որպէսզի Խաչի վրայ խաչուած Յիսուս Քրիստոսին խոստովանենք ուրիշների առաջ։ Այո՛, թող մարդիկ տեսնեն, թէ Ո՛ւմ ենք մենք խոստովանում, Ո՛ւմ ենք հաւատում, եւ Ո՛ւմ ենք սիրում։

Սբ. Եփրեմ Ասորին գրում է. *«Մեր տները, դռները, շուրթերը, կուրծքը եւ բոլոր անդամները լուսաւորե՛նք կենարար Խաչի նշանով։ Դո՛ւք, քրիստոնեանե՛ր, մի՛ թողէք այս խաչը ոչ մի ժամանակ, ոչ մի ժամ։ Թող նա ձեզ հետ լինի, որտեղ էլ որ գնաք։ Առանց Խաչի ոչինչ մի՛ արէք. անկախ այն բանից՝ ննջո՞ւմ էք, թէ՞ արթնանում, աշխատո՞ւմ էք, թէ՞ հանգստանո՞ւմ, ուտո՞ւմ էք, թէ՞ խմում, ճանապարհորդո՞ւմ էք ցամաքով, թէ՞ նաւարկում ծովով, մշտապէս զարդարէ՛ք ձեր բոլոր անդամներն այս կենարար Խաչով»*[1]։

Սբ. Կիւրեղ Երուսաղէմացին *ասում է. «Ուրեմն չամաչե՛նք խոստովանել Խաչեալին։ Թող Խաչը լինի այն կնիքը, որ մեր մատներով համարձակօրէն պատկերում ենք մեր ճակատի եւ ամէն ինչի վրայ՝ հացի, որ ուտում ենք, եւ բաժակների, որ խմում ենք, մուտքերի եւ ելքերի վրայ, քնելուց առաջ, երբ պառկում ենք ու արթնանում, երբ ճանապարհի վրայ ենք եւ հանգստանում ենք... Սա հաւատարիմների նշանն է եւ սատանաների ահը, որովհետեւ երբ նրանք տեսնում են Խաչը, յիշում են Խաչուեալին՝ վախենալով Նրանից, ով ջարդել*

1 https://minds.by/news/155 (առ 10/11/2023):

է վիշապի գլուխները»[1]:

Դաւիթ Անյաղթ *իմաստասէրն աստուածընկալ Սուրբ Խաչի մասին իր ներբողում գրում է. «Եւ «աստուածախաչ» ասելուց, ո՜վ աստուածասէրներ, մի՛ ամաչէք, քանզի սա մեզ համար, համաձայն Պօղոս առաքեալի, պարծանքների պարծանքն է. **«Ո՛վ Տիմոթէոս, ամօթ մի՛ համարիր վկայել մեր Տէր Յիսուսին, այլ մասնակից եղի՛ր աւետարանելու Աստծու զօրութիւնը, որը մեզ փրկեց, որովհետեւ կորստեան մատնուածների համար Խաչի քարոզութիւնը յիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներիս համար, Աստծու զօրութիւնը: Քանզի այն Աստծու զօրութիւնն է բոլոր հաւատացեալների փրկութեան համար»** (հմմտ. Բ. Տիմ. 1, 8-10: Ա. Կորնթ. 1, 18): Ուրեմն՝ սա մեզ համար ամօթ չէ, այլ պարծանքների պարծանքն է, քանի որ Աստծու զօրութեամբ է մեր փրկութիւնը: Դրա համար էլ Տիրոջ Գերեզմանի մօտ մարդկօրէն մտածող հրեշտակը, տրտմած կանանց որպէս սփոփանք, այսպիսի սրբասացութեամբ է ձայնում իր Տիրոջ անունը. **«Փրկչի՞ն էք փնտռում, Խաչեալի՞ն, ո՛վ կանայք. այստեղ չէ Նա, քանի որ յարութիւն առաւ»** (հմմտ. Մատթ. 28, 5: Մկ. 16, 6)... Այսուհետ ով որ համբոյրով մերձենայ դրան, ոչ թէ լոկ Խաչի, այլ ստուգապէս նոյն Ինքը՝ բեւեռուած Աստծու զօրութեանը կը մերձենայ, քանի որ Նա այդտեղ իսկ է, եւ այդտեղ կը լինի յաւիտեան: Եթէ Հին ուխտում, որպէս օրինակ, ասում. **«Սա՛ է Իմ հանգստի վայրը յաւիտեանս յաւիտենից. այստեղ կը բնակուեմ, քանզի հաւանեցի սրան»**, որչա՜փ առաւել եւս Նոր ուխտում այդպէս կը լինի: Քանի որ ասում է. **«Լեռը, որի վրայ Տէր Աստուած հաճեց բնակուել յաւիտեանս»**: Յաջորդ խօսքում էլ է այս բանը հաստատւում՝ **«Աստծու կառք»** (Ամբ. 3, 8) կոչելով այն, որով կառքի կարիք չունեցող էութիւնը*

1 https://www.orthodoxchurchquotes.com/2013/10/23/st-cyril-of-jerusalem-let-us-then-not-be-ashamed-to-confess-the-crucified/ (առ 10/11/2023):

բարձրացնում է սրա վրայ, որ ազատի գերուածներին[1]»։

*Եթէ Խաչն անչափ կարեւորութիւն չի ներկայացնում, ապա ինչպէ՞ս կարող է պատահել, որ Խաչի նշանը երեւայ երկնքում նախքան Քրիստոսի երկրորդ գալուստը (տե՛ս Մատթ. 24, 30)։ Խաչն «**Աստծու զօրութիւն է**» (Ա. Կորնթ. 1, 18), ու խաչակնքուելով յիշում ենք եւ ուրիշներին էլ յիշեցնում, որ մենք ամենազօր Աստծու զաւակներն ենք, որ Խաչը մեր զօրութիւնն է, մեր զէնքը, առանց որի չենք ուզում եւ չենք կարող պատերազմել չարի դէմ։ Խաչակնքուելով յայտարարում ենք, որ Տէր Յիսուս մեզ համար խաչուեց, իսկ մենք Խաչեալի հետեւորդներն ենք։ Խաչակնքումը մեզ եւ ուրիշներին յիշեցնում է, որ Խաչի միջոցով աշխարհն այլեւս մեռած է մեզ համար, մենք էլ՝ աշխարհի համար։ Ուստի խաչակնքուելով՝ օրհնենք ու փառաբանենք Ամենասուրբ Երրորդութեանը եւ դաւանենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի կատարած փրկագործութեան խորհուրդը՝ ձայնակցելով Պօղոս առաքեալին. «**Քա՛ւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով**» (Գաղ. 6, 14)։*

1 http://armenianhouse.org/babajanyan/cross-am/3.html (առ 10/11/2023)։

Խաչի ու խաչակնքման բեւեռների իմաստը

Համաձայն Եկեղեցու Հայրերի՝ խաչակնքուելիս մատներով ճակատին հպուելը խորհրդանշում է կեանքը, ձեռքը ճակատից վար իջեցնելը՝ մահը, ձախ ուսի կողմում դնելը՝ այս աշխարհի կեանքը, ու աջ ուսի կողմում դնելը՝ հանդերձեալ կեանքը։ Խաչակնքումը նաեւ խորհրդանշում է Բանն Աստծու՝ երկնքում լինելը, ապա դժոխք իջնելը, նաեւ դժոխքի աւերումը, որը ձախ կողմում է գտնւում, ու դարձեալ Հօր աջ կողմը նստելը։ Խաչի վերին մասը ցոյց է տալիս երկնքի Արքայութեան բացուելը, ստորին մասը՝ դժոխքի աւերումը, աջը՝ շնորհների բաշխումը, իսկ ձախը՝ մեղքերի թողութիւնը։ Խաչի վերին մասը ներկայացնում է երկնային իրականութիւնները, ստորին մասը՝ ննջեցեալների աշխարհը, իսկ աջ ու ձախ մասերը՝ աշխարհի մի ծայրից դէպի միւս ծայրն ապրող համայն մարդկութիւնը։

Խաչակնքուելիս աջ ձեռքի երեկ մատները միացուած դնում ենք մեր ճակատի վրայ՝ յիշելով, թէ երկնքում էինք, յետոյ ձեռքն իջեցնում ենք դէպի սիրտը՝ մտաբերելով, թէ երկիր ընկանք, եւ երբ ձեռքը տանում ենք ձախ ուսի կողմը, նշում ենք, թէ ձախակողմեան, այսինքն՝ մեղաւորների դասում եղանք, յետոյ տանելով աջ ուսի կողմը՝ հաստատում ենք, թէ արդարների դասում ենք ցանկանում լինել։ Երբ մեր ձեռքը դնում ենք ճակատին, ուզում ենք ասել, թէ մեր միտքը գամւում է Խաչի վրայ, ու այսուհետեւ թող Քրիստոսի միտքը մեզ առաջնորդի։ Երբ մեր ձեռքը տանում ենք դէպի վար, ուզում ենք ասել, թէ այլեւս մեր մարմինը չէ, որ պիտի իշխի մեր վրայ, այլ՝ Քրիստոս։ Ձեռքը ձախ եւ աջ

ուսերի կողմը տանելով՝ ուզում ենք ասել, թէ մեր ձեռքերը նոյնպէս խաչուեցին խաչի վրայ, չար գործերի համար արդէն անպիտան են ու միայն բարին պիտի գործեն։ Բացուած մատներով մեր ձեռքը տանելով դէպի մեր սիրտը՝ ասում ենք «Ամէն», այսինքն՝ ճշմարիտ է, եւ հաստատում, որ այդ բոլորին համաձայն ենք։ Այսպիսով խաչակնքումով ծառայում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որի նշանն է խաչը։

Սբ. Գրիգոր Տաթեւացին *այսպէս է բացատրում խաչի թեւերի իմաստը. «Խաչի թեւերը, նախ նշանակում են չորս բարիքները, որոնք Քրիստոս տուեց մեզ։ Վերին մասը ցոյց է տալիս երկնքի Արքայութիւնը, արքայութեան բացուելը, ստորին մասը՝ դժոխքի աւերումը, աջ կողմը՝ շնորհների բաշխումը, ձախ կողմը՝ մեղքերի թողութիւնը։ Երկրորդ՝ նշանակում են չորս առաքինութիւնները, որոնք հարկ է տարածել մեր ներքին մարդու մէջ։ Վերեւի մասը՝ նշանակում է սէրը, ներքեւի մասը՝ խոնարհութիւնը, աջ կողմինը՝ հնազանդութիւնը, ձախ կողմինը՝ համբերութիւնը։ Երրորդ՝ նշանակում է մարդու զրկուելը դրախտից, քանի որ աջ կողմում էր, սակայն ձախակողմեան դարձաւ։ Չորրորդ՝ նշանակում է մարդու չորս խորհուրդները, վերեւի մասը՝ միշտ վերինի մասին խորհելը, ուր նստած է Քրիստոս, ներքեւի մասը՝ մարդու կեանքի վախճանը։ Աջ ու ձախ կողմերը խորհրդանշում են դատաստանի ընտրութիւնը՝ աջակողմեանը՝ փառքը, ձախակողմեանը՝ պատիժը, հատուցումը...»*[1]։

Խաչափայտի գագաթի մասը նշանակում է Քրիստոսի աստուածային բնութիւնը, իսկ պատուանդանը՝ Նրա մարդկային բնութիւնը։ Գագաթի եւ պատուանդանի միակձոյլ լինելը ներկայացնում է Քրիստոսի անձի մէջ աստուածային ու մարդկային բնութիւնների միաւորումը եւ անբա-

1 http://mail.armenianhouse.org/babajanyan/cross-am/3.html (առ 10/11/2023):

ժանելիութիւնը խաչելութեան պահին։ Խաչի աջ թեւը ներկայացնում է արդարների շնորհները, իսկ ձախ թեւը՝ մեղաւորների պատուհասը։ Դարձեալ՝ աջ թեւը ներկայացնում է մարդկանց փրկութիւնը, իսկ ձախ թեւը՝ դեւերի սաստուելը։ Խաչի չորս թեւերը նշանակում են խաչի միջոցով փրկուած չորս իրականութիւնները, այսինքն՝ երկնաւորները, երկրաւորները, ողջերն ու մեռելները։ «Երկնաւորները եւ երկրաւորները» բառերով Սբ. Գրիգոր Տաթեւացին ակնարկում է տիեզերքին եւ աշխարհին, այլ խօսքով՝ համայն ստեղծագործութեան նորոգութեանն ու փրկութեանը, որի մասին է խօսում Պօղոս առաքեալը (տե՛ս Հռոմ. 8, 19-22)։ Խաչի չորս թեւերը ներկայացնում են նաեւ տիեզերքի չորս ծագերում ցրուած եւ փրկութեան արժանացած հաւատացեալներին։

Խաչակնքման երեք բարիքները՝ իմաստութիւն, զօրութիւն եւ անմահութիւն

Խաչակնքուելով մենք երեք տեսակ բարիքներ ենք ստանում՝ իմաստութիւն, զօրութիւն եւ անմահութիւն։ Սբ. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Արդ, երբ պատսպարւում ենք Խաչով, այսինքն՝ թիկունքով ամրապնդւում նրանով, ինչպէս պարսպով, եւ յենւում, այսինքն՝ հաստատւում սրտով նրա վրայ, ինչպէս գաւազանի, երեք տեսակ բարիքներ ենք ստանում՝ իմաստութիւն, զօրութիւն եւ անմահութիւն, ինչպէս ասւում է «Երեքսրբեան» աղօթքում. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ»։ Քանզի թէեւ Քրիստոս Աստուած խաչուեց մարմնով, սակայն Աստուած է բնութեամբ, թէեւ հրեաները խաչեցին իբրեւ մի տկար մարդու, սակայն Նա հզօր է զօրութեամբ, ու թէեւ Նա մեզ համար մեռաւ, սակայն անմահ է կենդանութեամբ։ Ուստի երբ իմացութեամբ եւ հաւատով պատսպարւում ենք այս եռակի բարութեամբ, իմաստնանում ենք ու հասկանում, որ նրա վրայ խաչուածն Աստուած է, անմեղ, ով մեռնում է մեր իսկ փրկութեան համար, որպէսզի [Իր մահուամբ] վճարի մեր [մեղքերի] պարտքերը եւ մեզ ազատի մահից։ Եւ յոյսով ու սրտով յենւում ենք խաչի վրայ, որպէսզի այն, որը մեծ զորութեամբ յաղթեց մեր թշնամուն, զօրացնի մեզ՝ յաղթահարելու համար սատանայի զօրութիւնը։ Այլեւ սիրով ու հաւատով միանում ենք Քրիստոսին, որպէսզի Իր յաւիտենական կեանքի անմահութեանը տնկակից դարձնի մեզ։ Այսպէս իմաստնանում ենք մտքով, զօրանում մարմնով եւ անմահանում հոգով, քանզի պատսպարւում ենք Խաչով, այսինքն՝ հաւատով, յոյսով եւ սիրով»[1]։

1 **Սբ. Գրիգոր Տաթեւացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր. «Քարոզ վասն Խաչի»։

Պատասխան աղանդաւորների առարկութիւններին

Աղանդաւորներն առարկում են. *Ձեռքերը չեն կարող օգտագործուել կրօնական նպատակներով, քանի որ Աստծուն պէտք է միայն երկրպագել հոգով ու ճշմարտութեամբ: Գրուած է. «Ճշմարիտ երկրպագուները կ'երկրպագեն Հօրը հոգով եւ ճշմարտութեամբ: Հոգի է Աստուած, եւ նրա երկրպագուները պէտք է հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագեն» (Յովհ. 4, 23-24): «Աստուած... ձեռակերտ տաճարներում չի բնակւում, ոչ էլ մարդկանց ձեռքերով է պաշտւում» (Գործք 17, 24-25):*

Պատասխան. *Մերժելով խաչը՝ աղանդաւորները մերժում են նաեւ խաչակնքումը: Պօղոս առաքեալի այս խօսքերը խաչակնքուելու մասին չեն: Աթէնացիները եւ բոլոր հեթանոսները չէին կարող դա անել: Հեթանոսները հաւատում էին, որ իրենց կուռքերն ուտելու եւ խմելու կարիք ունեն, բայց քահանաները դրանք վերցնում էին իրենց համար (տե՛ս Դան. 14, 1-22: Գործք 17, 24-25): Ձեռքերը կարող են ծառայել կրօնական նպատակների եւ աղօթքների համար: Դա ապացուցում են Ինքը՝ Քրիստոս եւ Իր սուրբ առաքեալները: Քրիստոս Իր սուրբ ձեռքերը դրեց երեխաների վրայ եւ օրհնեց նրանց (տե՛ս Մարկ. 10, 16): Համբարձուելով երկինք, Յիսուս «բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց» Իր աշակերտներին (տե՛ս Ղուկ. 24, 51): Ձեռադրութեան միջոցով քահանայական իշխանութիւն ստացան եկեղեցու սպասաւորները. «Նրանց կանգնեցրին առաքեալների առաջ եւ աղօթք անելով՝ նրանց վրայ ձեռք դրեցին» (Գործք 6, 6): «Նրանց համար իւրաքանչիւր եկեղեցու վրայ երէցներ ձեռնադրեցին» (Գործք 14, 22): Պօղոս առաքեալն ասում է. «Ուզում եմ, որ տղամարդիկ աղօթեն ամէն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դէպի*

վեր՝ առանց բարկութեան եւ երկմտութեան...» (Ա. Տիմ. 2, 8): Նաեւ՝ «Զանց մի՛ առ այն շնորհը, որը քո մէջ է, որ տրուեց քեզ մարգարէութեամբ, երէցների ձեռնադրումով» (Ա. Տիմ. 4, 14): Եւ դարձեալ՝ «Ձեռքերդ շտապով որեւէ մէկի վրայ մի՛ դիր եւ ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր, քեզ մաքո՛ւր պահիր» (Ա. Տիմ. 5, 22): Երանելի Դաւիթն էլ ասում է. «Տէ՛ր, թող աղօթքս քեզ ուղղուի որպէս խունկ, ձեռքերիս կարկառումը՝ իբրեւ երեկոյեան պատարագ» (Սաղմ. 140, 2): Նաեւ՝ «Այսպէս իմ կեանքում քեզ պիտի օրհնեմ եւ քո անունով ձեռքս բարձրացնեմ» (Սաղմ. 62, 5): Ձեռքերը բարձրացնելու օրինակով այժմ խաչակնքւում ենք՝ Խաչի վրայ Յիսուս Քրիստոսի փրկագործութեան խորհուրդը դաւանելու եւ հաստատելու համար:

Աղանդաւորներն առարկում են. *Նա, ով խաչակնքւում է ձեռքով, Աստծու Որդուն վերստին խաչն է հանում՝ ծաղրանք ու խայտառակ է դարձնելով: Պօղոս առաքեալն ասում է.* ***«Վերստին խաչն են հանում Աստծու Որդուն եւ դարձեալ խաղք ու խայտառակ դարձնում»*** *(Եբր. 6, 6):*

Պատասխան. *Պօղոս առաքեալն այստեղ խօսում է ճշմարիտ հաւատքից «սայթաքողների», այսինքն՝ հաւատուրացների եւ Աստծու Որդուն հայհոյողների մասին: Առաքեալի խօսքն ամբողջովին ընթերցենք.* ***«Եթէ սայթաքեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարութեամբ նորոգուել, որովհետեւ նրանք վերստին խաչն են հանում Աստծու Որդուն եւ դարձեալ խաղք ու խայտառակ դարձնում»*** *(Եբր. 6, 6): Սրանց համար ապաշխարութիւնն այլեւս անհնար է: Աստծու Որդուն վերստին խաչը հանել ոչ ոք չի կարող, քանի որ Նա այժմ Իր աստուածային փառքով նստած է երկնքում՝ Հայր Աստծու աջ կողմում: Խաչակնքուելով հաւատացեալները*

չեն ծաղրում Քրիստոսին, այլ արտայայտում են իրենց ակնածանքը Նրա հանդէպ եւ խոնարհաբար գիտակցելով իրենց անարժանութիւնը՝ աղօթում են Աստծուն շնորհով լցուելու, օգնութեան եւ սրբացման համար։

Աղանդաւորներն առարկում են. *Խաչակնքումը «խաբէութիւն է մեր ձեռքերի մէջ» (Ես. 44, 20)։*

Պատասխան. *Եսայի մարգարէի ժամանակ ոչ ոք չէր խաչակնքւում, քանի որ վերջինս Նոր կտակարանում է հաստատուել։ Մարգարէն պարզապէս խօսում է մի կռապաշտի մասին, ով ծառի կէսն այրեց խարոյկի վրայ, հաց եփեց ու միս խորովեց ուտելու համար, իսկ մի կէսն էլ արձան պատրաստեց, որի առաջ ընկած՝ խոնարհուելով երկրպագեց նրան, աղօթեց նրա առաջ եւ ասաց. «**Փրկի՛ր ինձ, քանզի դու իմ աստուածն ես**» (Ես. 44, 16-17)։ Իսկ հեթանոսները չգիտակցեցին ու չհասկացան (Ես. 44, 19)։ Մարգարէն շարունակում է. «**Իմացի՛ր, նրանց սիրտը մոխիր է, եւ նրանք մոլորուած են, նրանցից ոչ ոք չի կարող փրկել իրենց հոգիները. դուք տեսնում էք, բայց չէք ասում, թէ՝ «Խաբէութիւն է մեր ձեռքերի մէջ**» (Ես. 44, 20)։*

Աղանդաւորներն առարկում են. *Խաչակնքումը նոյնպէս նեռի կնիքն է, քանզի գրուած է. «**Եւ կը ստիպի բոլորին՝ փոքրերին եւ մեծամեծերին, հարուստներին եւ աղքատներին, ազատներին ու ծառաներին, որ դրոշմ դնեն նրանց աջ ձեռքի եւ ճակատի վրայ**» (Յայտն. 13, 16–17։ 14, 9-11)։*

Պատասխան. *Այսպէս հայհոյել կարող են միայն աղանդաւորները (հմմտ. Բ. Պետր. 2, 10։ Յուդ. 1, 18), անհաւատներն ու կորստեան մատնուածները, որոնց մտքերն «**այս աշխարհի աստուածը կուրացրեց, որպէսզի նրանց մէջ չծագի Քրիստոսի***

Աւետարանի փառքի լոյսը, Քրիստոսի, որ պատկերն է աներեւոյթ Աստծու» (Բ. Կորնթ. 4, 4)։ Խաչակնքումը կատարւում էր դեռեւս առաքեալների օրերից՝ Տէր Յիսուս Քրիստոսի անունով, եւ Յայտնութեան գրքում (Յայտն. 13, 16-17) Յովհաննէս առաքեալը խօսում է գազանի՝ նեռի անուան կնիքը դնելու մասին, որը յայտնուելու է Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստից առաջ։ Հակաքրիստոսի սուտ մարգարէն այնուհետեւ անհրաժեշտ է դարձնում, որ բոլորն ունենան գազանի անուան նշանը, ինչպէս որ հռոմէացի զինուորները ձեռքերի վրայ ունէին իրենց անուան դաջուածքը, իսկ ստրուկները կրում էին իրենց տիրոջ անունը։

Պատմական վկայութիւններ
խաչակնքման զօրութեան մասին

Անհնար է հաշուել այն բոլոր դէպքերը, երբ Աստծու սուրբ մարդիկ խաչի զօրութեամբ հալածել եւ քշել են սատանային ու նրա չար հրեշտակներին։ Եկեղեցու կողմից խաչին տրուած պատիւն աւելի շատ ապացոյցներով հաստատելու եւ խաչի զօրութիւնը՝ որպէս Քրիստոսի ամենասուրբ խորհրդանշանը լաւագոյնս ներկայացնելու համար ստորեւ կը նկարագրուեն խաչակնքման մի քանի հրաշագործութիւնների վկայութիւններ, որոնց մեծ մասը սուրբերի կեանքից է՝ տեղի ունեցած տարբեր ժամանակներում։

Սբ. Անտօն Մեծը, *խօսելով դեւերի դէմ խաչակնքման զօրութեան մասին, ասում է. «Երբ դեւերը գիշերով գալիս են քեզ մօտ, կամենալով յայտնել ապագան կամ ասել՝ «Մենք հրեշտակներ ենք», մի՛ լսիր նրանց, քանզի նրանք ստում են։ Եթէ նրանք գովաբանում են քո ճգնութիւնը եւ հաճոյանում, մի՛ լսիր նրանց եւ ընդհանրապէս մի՛ մտերմացիր նրանց հետ. աւելի լաւ է քեզ եւ քո տունը խաչակնքես եւ աղօթես։ Այն ժամանակ կը տեսնէք, որ նրանք անտեսանելի կը դառնան, քանի որ վախկոտ են եւ յատկապէս սարսափում են Տիրոջ խաչի նշանից։ Որովհետեւ Փրկիչը, խաչով խլելով նրանց ուժը, ամաչեցրեց նրանց»*[1]։

Սբ. Անտօն Մեծը *բազմիցս էր խաչի նշանով իրենից վռնդում չար ոգիներին եւ միշտ նրանց ասում էր. «Եթէ*

1 https://pravoslavie.ru/42104.html (առ 11/10/2023):

այդ իշխանությունը տրուած է ձեզ Տիրոջից, ապա ահա ես, արէ՛ք ինձ հետ այն, ինչ կարող էք, իսկ եթէ չէք կարող, ապա ինչո՞ւ էք իզուր ջանք գործադրում։ Անշուշտ, դուք չէք կարող դիմակայել Խաչի նշանի զօրութեանը»[1]*։*

Սբ. Անտոն Մեծը, *ցանկանալով ամաչեցնել որոշ կռապաշտների, ովքեր եկել էին իրեն վիրաւորելու համար, նրանց առջեւ բերեց մի քանի դիւահարներ եւ ասաց նրանց. «Կա՛մ դուք մաքրում էք դրանք ձեր մտորումներով եւ ցանկացած այլ արուեստով կամ կախարդութեամբ, որը ցանկանում էք՝ կոչ անելով ձեր կուռքերին, կա՛մ հակառակ դէպքում, եթէ չէք կարող, հրաժարուէ՛ք ձեր վէճերից մեր դէմ եւ կը տեսնէք Քրիստոսի Խաչի զօրությունը»։ Այդ պահին նա կանչեց Տիրոջը, երեք անգամ խաչակնքեց դիւահարներին, եւ նրանք անմիջապէս ազատուեցին դեւերից ու բժշկուեցին՝ փառաբանելով Աստծուն*[2]։

Սբ. Անտոնն Մեծը *նաեւ ասում էր. «Երբեմն դեւերը չեն կարողանում շփոթել մեր մտքերը եւ երազներով գայթակղում ու վախեցնում են մեզ, բայց առաջին խաչրակնքումից յետոյ բոլորն անհետանում են»*[3]*։*

Սբ. Յովհաննէս *աւետարանչին շատ անգամ ցանկացել են սպանել՝ նրա ըմպելիքի մէջ թոյն խառնելով, իսկ նա միշտ, իր սովորութեան համաձայն, ամէն ինչ ճաշակելուց կամ խմելուց առաջ խաչակնքել է, օրհնել ու ապա դրանք օգտագործել, իսկ*

---

1 https://azbyka.ru/otechnik/Grigorij_Djachenko/uroki-i-primery-hristianskoj-very-chast-1/10_28 (առ 11/11/2023):

2 https://www.johnsanidopoulos.com/2019/03/the-sign-of-cross-its-power-meaning-and.html (առ 11/11/2023):

3 https://religion.wikireading.ru/204564 (առ 11/12/2023):

թոյնն ու բոլոր վնասակար զօրութիւնները կորցրել են իրենց ուժը: Ահա մի պատմութիւն՝ կապուած Յովհաննէս առաքեալի հետ. «Մի հեթանոս մարդ կար, ով դրամի մեծ պարտք ունէր: Նա պարտատէրերից նեղուելով եւ անյուսութեան մէջ ընկնելով՝ գնաց մի հրեայ դեղագործի մօտ՝ հնար խնդրելու: Դեղագործը նրան դեղ տուեց, որպէսզի այդ յուսահատը դեղամահ լինի: Մարդը գնաց տուն եւ երբ ուզեց թոյնը խմել, յիշեց քրիստոնեաների սովորութիւնը ուտելիքն ու ըմպելիքը օրհնելու մասին, փորձելու համար խաչակնքեց, որից յետոյ բաժակի միջինը խմեց, եւ սուրբ Նշանի զօրութեամբ նրան ոչինչ չպատահեց: Նոյն բանը երկրորդ անգամ փորձելուց յետոյ գնաց պատմեց դեղագործ հրեային: Վերջինս, լսելով եղածի մասին, գնաց սուրբ Յովհաննէս աւետարանչի մօտ եւ լսելով ու հաւատալով խաչուած Քրիստոսին՝ մկրտուեց: Այնժամ Յովհաննէսը կանչեց նաեւ հեթանոսին, նրան եւս դարձի բերեց ի Քրիստոս, ապա կարգադրեց նրան բռով խոտ վերցնել, ու յանկարծ խոտը նրա ձեռքում դարձաւ ընտիր ոսկի, ու դրանով հատուցեց իր պարտքերը»[1]:

Սբ. Գէորգ Զօրավարի մասին պատմում են, որ երկար տանջանքներից յետոյ Դիոկղէտիանոս կայսրը նրան առաջարկում է. «Եթէ ուզենաս ինձ ենթարկուել, այն բոլոր տանջանքները, որոնք դու կրեցիր, ես կը հարթեմ բազմաթիւ պատիւներով»: Սուրբն ասաց. «Եթէ թոյլ կը տաս, գնանք տաճար, տեսնենք ձեր պաշտած աստուածներին»: Թագաւորն իր բոլոր ուղեկիցների հետ ուրախութեամբ գնում է Ապոլլոնի տաճարը՝ իր հետ տանելով սբ. Գէորգին: Երբ տաճար մտան, պատրաստուեցին զոհաբերութեան: Տիրեց խոր լռութիւն, բոլորը սուրբին էին նայում, որը, ըստ

1 **Եւսեբիոս Պամփիլոս**, «Եկեղեցու պատմութիւն», տես http://armenianhouse.org/babajanyan/cross-am/1.html (առ 11/12/2023):

իրենց, աստուածներին զոհ պիտի մատուցեր։ Իսկ ճշմարիտ Աստծու ծառան մօտեցաւ Ապոլլոնի կուռքին եւ ձեռքը վեր բարձրացնելով՝ այդ անշունչ կուռքին՝ որպէս ողջի, հարցրեց. «Այդ դո՞ւ ես, որ ինձանից ուզում ես զոհ ընդունել, ինչպէս Աստուած»։ Սա ասելով՝ սուրբը կուռքի վրայ տեառնագրեց խաչի նշանով (այսինքն՝ խաչակնքուեց)։ Դեւը, որ բնակւում էր այդ կուռքի մէջ, սարսափած պատասխանեց. «Ո՛չ, ես աստուած չեմ։ Միայն մէ՛կ Աստուած կայ, որի մասին դու ես վկայում, իսկ մենք ընկած հրեշտակներ ենք, որ նախանձով բռնուած՝ մոլորեցնում ենք մարդկանց»։ Սուրբը նորից ասաց նրան. «Այդ դէպքում ինչպէ՞ս ես համարձակւում դու այստեղ մնալ, երբ ես՝ ճշմարտութեան ծառաս, եկայ»։ Այս բառերից յետոյ կուռքի միջից ինչ-որ լացակումած ձայներ լսուեցին, ու յանկարծ հեթանոսների պաշտած այդ Ապոլլոնի կուռքն ընկաւ եւ փշուր-փշուր եղաւ»[1]։

Սբ. Կիպրիանոսն *ապրել եւ գործել է 3-րդ դարում։ Նա ազնուական եւ մեծահարուստ մարդկանցից էր, իմաստուն եւ մոգութեան արուեստում հմտացած։ Նրա հրամանի տակ էին նոյնիսկ դեւերի բոլոր գնդերը։ Նոյն քաղաքում էր բնակւում նաեւ քուրմերի մէկի դուստրը՝* Յուստիանէն, *ով, քրիստոնեայ դառնալով, ճշմարիտ հաւատի է բերում նաեւ իր ծնողներին։ Ստանալով մի կռապաշտ իշխանի ամուսնութեան առաջարկը՝ մերժում է՝ պատճառաբանելով, որ ինքն արդէն Քրիստոսի հարսնացուն է։ Իշխանը խնդրում է կախարդ Կիպրիանոսի աջակցութիւնը։ Կիպրիանոսը նրան ասում է, թէ հեշտութեամբ կարող է կատարել նրա սրտի խնդրածը։ Այն ժամանակ նա Յուստիանէի մօտ ուղարկուեց պոռնկութեան դեւին։ Երբ դեւը եկաւ, սբ. կոյսը հասկացաւ դա, իրեն կնքեց*

1 **Իգումեն Մարկոս,** «Չար ոգիները ու նրանց ազդեցութիւնները մարդկանց վրայ», տես նախորդ յղումը։

Սուրբ Խաչի նշանով, եւ դեւը հալածուեց։ Կիպրիանոսն աւելի չար դեւ է ուղարկում։ Նա էլ չի կարողանում համոզել կոյսին։ Այն ժամանակ իր մօտ է կանչում դեւերի իշխանին՝ ասելով. «Կարո՞ղ ես իմը դարձնել Յուստիանէ կոյսին»։ Երբ դեւը մօտեցաւ, սուրբ կոյսը հալածեց նրան Խաչի նշանով, եւ դեւը դողալով եկաւ Կիպրիանոսի մօտ։ Վերջինս հարցրեց. «Ինչ է դա»։ Դեւն ասաց. «Տեսայ Սուրբ Խաչի նշանը եւ դողալով փախայ»։ Կիպրիանոսն ասաց. «Ինչ է այդ Խաչի նշանը, որ տեսնում էք եւ դողում»։ Դեւն ասաց. «Երբ Աստուած մեզ ստեղծեց, բոլոր հրեշտակներից գերագոյն եղանք։ Եւ ստեղծեց Ադամին ու դրեց փափկութեան դրախտում՝ այն խնամելու եւ պահելու համար։ Մենք նախանձեցինք նրա փառքին. օձի կերպարանքով խաբեցինք Եւային եւ Ադամին, նրանք կերան պտուղը ու լոյսից մերկացան։ Դրախտից հանելով՝ Տէր Աստուած նրանց վտարեց։ Բայց Քրիստոս Աստուած չկամեցաւ Իր ծառաների կորուստը, խոնարհուեց հայրական ծոցից, մարմին առաւ Սուրբ Կոյս Մարիամից, խաչուեց, թաղուեց, յարութիւն առաւ մեռելներից, փառքով համբարձուեց երկինք, նստեց Հօր աջ կողմում, գալու է նոյն մարմնով՝ դատելու ողջերին եւ մեռածներին։ Սա է Սուրբ Խաչի զօրությունը, որ տեսնում եւ սոսկում ենք»։ Այն ժամանակ Կիպրիանոսն ասում է. «Եթէ Սուրբ Խաչի զօրութիւնն այսպիսի է, ապա որչա՜փ առաւել է Խաչեալի զօրութիւնը»։ Կիպրիանոսը հաւատում է Խաչեալին, որի զօրութիւնը հալածում է դեւերին։ Նա գնում է եկեղեցի՝ եպիսկոպոսի մօտ, եւ Քրիստոսի անունով մկրտւում։ Յետոյ բերում է իր բոլոր կախարդական գրքերը եւ կրակով այրում՝ հաւատալով Քրիստոսի Ծննդեանը, Ս. Մկրտութեանը, Ս. Յարութեանը, Ս. Թաղմանը, Ս. Համբարձմանը եւ Երկրորդ Գալստեանը։ Եթէ Կիպրիանոսը մի ժամանակ ամէն ինչ կապում էր սատանայի եւ դեւերի պիղծ խօսքով, ապա արդէն Ս. Խաչի զօրութեամբ

էր կապում է ամեն մի չար աչք, չար լեզու, կախարդներին, աղանդաւորներին, թշնամու բոլոր որոգայթները[1]։

Հայր Պիմէնի մօտ մի քանի ծերեր եկան։ Այնտեղ մի մարդ կար, որի տղայի գլուխը դիւական հնարքներով ետ էր շրջուած։ Երբ հայրը տեսաւ ծերերի բազմութիւնը, տղային վանքից հանելով՝ դրեց նրանց առջեւ ու սկսեց լալ։ Ծերերից մէկը հարցրեց նրան. «Ո՞վ մարդ, ինչո՞ւ ես լալիս»։ Նա պատասխանեց. «Ես հայր Պիմէնի բարեկամն եմ, այս երեխային դժբախտութիւն է պատահել, ուզում եմ նրան ցույց տալ հայր Պիմէնին, բայց վախենում եմ, քանի որ նա չի ուզում մեզ տեսնել, եւ եթէ հիմա իմանայ, որ այստեղ եմ, մարդ կ՚ուղարկի եւ մեզ կը վռնդի։ Ձեզ տեսնելով՝ համարձակուեցի մօտենալ։ Եթէ հիմա կարող էք, ողորմեցէ՛ք ինձ եւ տղայիս տարէք ներս, աղօթեցէ՛ք նրա համար»։ Ծերը երեխային իր հետ ներս տարաւ եւ իմաստութեամբ վարուելով՝ իսկոյն հայր Պիմէնի մօտ չտարաւ, այլ առանձին-առանձին մօտեցնելով իր հետ եղող եղբայրներին, ասում էր. «Խաչակնքի՛ր այս տղային»։ Եւ այդպէս բոլորը խաչակնքեցին, իսկ վերջում մօտեցաւ հայր Պիմէնին, բայց նա չէր թողնում, որ իրեն մօտեցնեն։ Ծերերը խնդրեցին նրան. «Մեր հայր, ինչպէս բոլոր եղբայրներն արեցին, դու էլ նոյնը արա՛»։ Նա հառաչեց, ոտքի ելաւ եւ աղօթեց՝ ասելով. «Աստուա՛ծ իմ, բժշկի՛ր Քո արարածին, որ թշնամին մեր վրայ չտիրի», ու խաչակնքելով՝ բժշկուած երեխային վերադարձրին հօրը[2]։

Նիկոն անունով մի մարդ կար, ով ապրում էր նեապոլիտանական երկրում, Դէկիոս կայսեր օրօք։ Նրա հայրը,

1 Նոյն տեղում։

2 Նոյն տեղում։

հեթանոս էր՝ ծնունդով յոյն, իսկ մայրը՝ քրիստոնեայ։ Նիկոնը զինուորականների շարքին է դասուել ոչ այնքան իր քաջութեան, որքան երիտասարդութեան եւ գեղեցիկ արտաքինի համար։ Մայրը, իմանալով որդու թուլութեան եւ պատերազմի վտանգների մասին, չնայած այն բանին, որ նա հեթանոս էր, անընդհատ ասում էր նրան. «Եթէ երբեւէ վտանգի մէջ լինես, ինչը յաճախ է պատահում պատերազմի ժամանակ, զինուի՛ր Քրիստոսի խաչի նշանով, այն ժամանակ կը խուսափես քո թշնամիներից, եւ ո՛չ նետ, ո՛չ նիզակ, ո՛չ սուր չեն դիպչի քեզ»։ Իրօք, շուտով մի ճակատամարտի սկզբում ջոկատը, որում գտնւում էր Նիկոնը, շրջապատուած եւ կաշկանդուած էր թշնամիներով։ Տեսնելով իր ընկերների վախճանը եւ իր անխուսափելի մահը՝ Նիկոնը յիշեց մօր հրահանգները եւ յանձնուելով Քրիստոսի կենարար խաչի պաշտպանութեանը՝ խաչակնքուելով բացականչեց. «Տէ՛ր Աստուած Ամենակարող, ցոյց տուր հիմա ինձ՝ Քո ծառային, Քո պատուական եւ կեանք տուող խաչի զօրութիւնը, որպէսզի, ցրելով իմ թշնամիներին եւ յաղթանակած երեւալով, այսուհետ ես ծառայեմ եւ երկրպագեմ Քեզ մօրս հետ միասին»։ Դրանից յետոյ նա ամուր յոյսով շտապում է դէպի իր թշնամիները, յաղթում է եւ նրանց փախուստի մատնում։ Այնուհետեւ Նիկոնը փառաբանում է Աստծուն եւ ասում. «Մեծ է քրիստոնեաների Աստուածը, որը մի խաչի զօրութեամբ տապալեց թշնամիներին»։ Նա, վերադառնալով տուն, իր մօր հետ միասին փառաւորեց Աստծուն եւ քրիստոնեայ դառնալով՝ նահատակուեց Քրիստոսի համար[1]։

Հայր Լոնգինի *մասին լսելով՝ քաղցկեղով հիւանդ մի կին գնաց նրան փնտռելու։ Այնպէս պատահեց, որ կինը գտաւ*

1 https://azbyka.ru/otechnik/Grigorij_Djachenko/uroki-i-primery-hristianskoj-very-chast-1/10_28 (առ 11/10/2023):

նրան ծովի ափին՝ չոր ճիւղեր հաւաքելիս։ Եւ կինն ասաց. «Աբբա՛, որտե՞ղ է հայր Լոնգինը»։ Ու չգիտէր, որ նա է։ Իսկ նա պատասխանեց. «Ինչ ես ուզում այդ ստախօսից։ Մի՛ գնա նրա մօտ, որովհետեւ նա ստախօս է։ Ինչ է քեզ հետ պատահել»։ Կինը պատմեց իր հիւանդութեան մասին։ Հայր Լոնգինը խաչակնքեց նրա հիւանդ տեղը եւ ասաց. «Գնա՛, եւ թող Աստուած բժշկի քեզ, որովհետեւ Լոնգինը քեզ չի կարող օգուտ բերել»։ Կինը հեռացաւ եւ հաւատալով այդ խօսքերին՝ իսկոյն առողջացաւ։ Դրանից յետոյ նա մարդկանց պատմում էր այդ մասին՝ տալով ծերի նկարագրութիւնը։ Ու նրան ասացին, որ դա հէնց հայր Լոնգինն է եղել[1]։

Սբ. Նոննա Նազիանզացին՝ *Սբ. Գրիգոր Աստուածաբանի մայրը, մի անգամ ծանր հիւանդութեան ենթարկուելով, բազում տառապանքներ կրեց, իսկ ամենածանրը՝ սննդի հանդէպ զզուանքն էր, որը անբուժելի էր եւ տեւեց շատ օրեր։ Սբ. Գրիգորը պատմում է, թէ «մայրը պատկերացնում էր, որ գիշերային տեսիլքում կարծես յանկարծակի յայտնուեց նրան զամբիւղով եւ սպիտակ հացով, ապա նրանց վրայ աղօթք անելով ու խաչակնքելով մեր սովորութեան համաձայն՝ ես նրան տուեցի ճաշակելու, որպէսզի նրա ուժը վերականգնուի։ Եւ իսկապէս, դրանից յետոյ նրա ուժը վերականգնուեց եւ այնպէս ամրապնդուեց, որ հիւանդ կինը քնից արթնացաւ՝ արդէն ապաքինուած»*[2]։

Հայր Պաֆնուտիոսը *պատմում է. «Այսպէս, մի օր պատերազմելով՝ իմ վրայ յարձակուեց երկմտութեան դեւը եւ չէր թողնում աղօթել ու ծանրութիւն բերեց վրաս։ Երբ այդ*

1 http://armenianhouse.org/babajanyan/cross-am/1.html (առ 11/03/2023):

2 https://azbyka.ru/otechnik/Grigorij_Djachenko/uroki-i-primery-hristianskoj-very-chast-1/10_28 (առ 11/10/2023):

դառն ու ծանր նեղութեան մէջ էի, ինձ պարտադրելով վեր կացայ, կանգնեցի սուրբ Խաչի առջեւ, երկրպագում էի ու Խաչի նշանով տեառնագրում երեսս։ Երբ այդպէս մի քիչ համբերեցի, այդ պատերազմում պնդացայ, Խաչի զօրութեամբ դեւերը ցրուեցին, ու լեզուիս կապերն արձակուեցին։ Արդ, սիրելի՛ եղբայր, երբ քո վրայ հասնի նման պատերազմ, ոտքի կանգնելով՝ թեկուզ չաղօթես, բայց միայն խաչակնքուես, Աստուած կը տեսնի համբերութիւնդ ու քեզ Իր օգնութիւնը կ՚առաքի[1]*։*

Բայց Քրիստոսի հրաշափառ Խաչը ոչ միայն հիւանդութիւններ էր բուժում, այլեւ նոյնիսկ անվնաս էր դարձնում մարդու մարմինը կա՛մ բոցերից, կա՛մ կատաղի գազանների ծնոտներից, կա՛մ մահացու թոյներից։ Այո, սբ. նահատակ Թեկլան *խաչակնքեց իր այրման համար հաւաքուած վառելափայտերը, եւ կրակը չհամարձակուեց դիպչել նրա մարմնին*[2]*։*

Վասիլիսա Նիկոմեդիացի *սուրբ նահատակը պաշտպանեց իրեն Խաչի նշանով, եւ կրակի մէջտեղում՝ վառուող ջեռոցում, «նա ժամերով կանգնեց այրուող կրակների մէջ»՝ առանց որեւէ վնասի*[3]*։*

Գազանների կողմից յօշոտուելու դատապարտուած Սբ. նահատակներ Ավդոն *եւ* Սեննիսը *խաչակնքուեցին, եւ կատաղի գազանները, ինչպէս մեղմ գառներ, սկսեցին համբուրել Աստծու մարդկանց ոտքերը*[4]*։*

---

1 Վարք Հարանց, http://armenianhouse.org/babajanyan/cross-am/1.html (առ 11/11/2023)

2 https://azbyka.ru/otechnik/Grigorij_Djachenko/uroki-i-primery-hristianskoj-very-chast-1/10_28 (առ 11/11/2023):

3 Նոյն տեղում:

4 Նոյն տեղում:

Թէոդոր անունով մի շատ անհանգիստ վանական կար։ Նա ոչ մէկին չէր հնազանդւում, իսկ հոգու փրկութեան մասին անգամ լսել չէր ուզում։ Երբ այդ քաղաքում սկսուեց ժանտախտ տարածուել, նա նոյնպէս վարակուեց ու վերջին ժամերն էր ապրում։ Նրա մօտ եկան վանական եղբայրներն ու աղօթքներով ուղեկցում էին հիւանդին իր վերջին ուղին։ Յանկարծ Թէոդորը բարձր ձայնով ճչաց. «Հեռո՜ւ, հեռո՜ւ գնացէք ինձանից, ես յանձնուած եմ վիշապին կերակուր լինելու, բայց նա չի կարողանում ինձ կուլ տալ՝ չնայած գլուխս արդէն իր բերանում է, որովհետեւ դուք այստեղ էք։ Եթէ ես յանձնուած եմ նրան կերակուր լինելու, ինչո՞ւ եմ ձեր պատճառով կրում այս տանջանքները»։ Այդ ժամանակ եղբայրներն ասացին նրան. «Այդ ի՞նչ ես ասում, եղբա՛յր, իսկոյն խաչակնքի՛ր քեզ սուրբ Խաչի կնիքով, ու նա կը հեռանա քեզանից»։ Բայց խեղճ մահապարտը նորից գոռում էր՝ ասելով. «Ուզում եմ խաչակնքուել, բայց նա իր թեփուկներով խանգարում է ինձ»։ Լսելով դա՝ բոլոր եղբայրները գետին ընկան եւ սկսեցին լացով ու աղաչանքով աղօթել Տիրոջը։ Յանկարծ հիւանդը թեթեւանում է ու բարձր ձայնով ասում. «Փա՜ռք Աստծուն, վիշապը, որ ուզում էր ինձ խժռել, փախաւ ձեր խաչակնքումներով ու աղօթքներով»։ Այս դէպքից յետոյ նա ապաքինուելով խպառ թողնում է իր մեղաւոր ընթացքը եւ դառնում է օրինակելի ու բարեպաշտ մի վանական, որից յետոյ ննջում է խաղաղութեամբ[1]։

Սիմէոն Ստիլիտը, լսելով սատանայի խօսքերը, որը նրան յայտնուեց լոյսի հրեշտակի տեսքով, այն է՝ կրակէ կառքով եւ կրակէ ձիերով, ասես ուղարկուած լինէր Աստծուց, ինչպէս որ Աստուած հրեղէն կառքով Եղիային երկինք տարաւ իր ապրած

1 **Գրիգոր Երկխօս,** «Զրոյցներ», http://armenianhouse.org/babajanyan/cross-am/1.html (առ 11/03/2023)

սուրբ կեանքի համար, ուզում էր աջ ոտքը դնել կրակէ կառքի վրայ, բայց մինչ դա անելը խաչակնքուեց։ Եւ սատանան իր կառքով ու ձիերով իսկոյն անհետացաւ, ինչպէս քամուց քշուած փոշին[1]։

Աբբա Դորոթէոսը մի օր Պալադիուսին ուղարկեց իր ջրհորի մօտ՝ լցնելու աւազանը, որտեղից բոլորը ջուր էին վերցնում։ Արդէն ճաշի ժամն էր։ Հասնելով ջրհորի մօտ՝ նա տեսաւ դրա ներքեւի մասում թունաւոր օձեր եւ վախից ջուր չքաշելով՝ վազեց՝ գոռալով. «Մենք մեռնելու ենք, աբբա՛, ջրհորի յատակին ես տեսայ սալաքար թունաւոր օձեր»։ Նա համեստ ժպտաց, քանի որ շատ ուշադիր էր Պալադիուսի հանդէպ, եւ գլուխը շարժելով՝ ասաց. «Եթէ սատանան իր գլխի մէջ մտցնէր բոլոր ջրհորների եւ աղբիւրների մէջ թունաւոր սողուններ նետել, դուք ընդհանրապէս չէ՞ք խմելու»։ Այնուհետեւ, խցից դուրս գալով, ինքն էլ լցրեց տաշտը ու խաչակնքելով այն՝ առաջինն անմիջապէս խմեց ջուրը եւ ասաց. «Որտեղ խաչն է, այնտեղ սատանայի չարութիւնը ոչինչ չի կարող անել»[2]։

316 թուականին՝ Լիցինիոս կայսեր հալածանքների ժամանակ, շատ քրիստոնեաներ նահատակուեցին, բայց Սեբաստիայի Վլաս եպիսկոպոսը բարձրացաւ Արգեոս լեռը, ուր ճգնում էր միայնութեան մէջ։ Նրա մօտ էին գալիս վայրի գազանները եւ հեզութեամբ սպասում էին նրա օրհնութեանը, իսկ նրանց միջի հիւանդներին ու վիրաւորներին բժշկում էր՝ նրանց վրայ ձեռք դնելով։ Իսկ երբ յայտնաբերուեց նրա տեղը, բռնեցին ու դատաւորի մօտ տարան։ Երբ հարցաքննելուց ու խոշտանգելուց յետոյ արդիւնքի չհասան, որոշեցին նրան իր քրիստոնէական հաւատի դաւանութեան

1 https://religion.wikireading.ru/11152 (առ 11/10/2023):

2 https://religion.wikireading.ru/36414 (առ 11/10/2023):

համար մահապատժի ենթարկել՝ լիճը գցել ու խեղդամահ անել։ Այդ պահին սուրբը տեառնագրում է ջուրը (այսինքն՝ խաչակնքում է) եւ քայլում դրա վրայով, ինչպէս ցամաքի, ու առաջարկում է իրեն տանջողներին, որ իրենք էլ իրենց կուռքերին օգնութեան կանչեն եւ իր նման քայլեն ջրի վրայով։ Հեթանոսներից ոմանք փորձում են այդպէս անել ու խեղդւում են լճում։ Իսկ երբ սբ. Վլասը ափ է վերադառնում, նրան բռնում ու իսկոյն գլխատում են, որ իրենց ձեռքից մի նոր հրաշքով չկարողանայ ազատուել։ Նահատակութիւնից առաջ նա աղօթում է աշխարհի բոլոր մարդկանց համար, մանաւանդ նրանց, որոնք կը յարգեն իր յիշատակը[1]։

Յուլիանոս ուրացող կայսրը մի անգամ որոշեց մարդկանց համար անհասանելի, սարսափազդու քարանձաւներից մէկում ապագայի մասին խորհրդակցել ստորգետնեայ դեւերի հետ։ Բայց անսպասելիօրէն խիզախ մարդը սարսափով է պատւում։ Ամէն քայլափոխի նա աւելի է սարսափում... Նման հարցում լինելով անփորձ՝ նա դիմում է Խաչին, նրա հնագոյն օգնութեանը եւ խաչակնքւում է սարսափների դէմ։ Նշանն աշխատեց. դեւերը պարտուեցին, վախերը ցրուեցին։ Հաւատուրացը փորձեց աւելի հեռու գնալ, սակայն նորից հանդիպեց նոյն սարսափներին։ Նա կրկին խաչակնքուեց, եւ դեւերի յարձակումները թուլացան[2]։

Սամոսատ քաղաքում մի մարդ կար՝ Աթանաս անունով, որի մօր անունը Մանիա էր, ով Տիրոջ սուրբ երկիւղը կրող մէկն էր։ Նա թէ՛ իր ստացուածքով էր սպասաւորում աղքատներին, թէ՛ աղօթքներով եւ Աստծու օրհնութիւնները հաւատքով

1 http://armenianhouse.org/babajanyan/cross-am/1.html (առ 11/10/2023)։

2 https://azbyka.ru/otechnik/Grigorij_Djachenko/uroki-i-primery-hristianskoj-very-chast-1/10_28 (առ 11/10/2023)։

տանում, բաժանում էր նրանց։ Երբ նա մի ճգնաւոր, քահանայ կամ եպիսկոպոս էր տեսնում, ընկնում էր նրանց առջեւ, աղօթք էր խնդրում եւ ասում. «Կնքի՛ր ինձ Խաչով, եւ ինքը, ձեռքերը պարզելով, ստանում էր սուրբ օրհնութիւնը ու յետոյ, կարծես թէ ափերի մէջ ինչ որ բան կրելով, փոխադրում էր աղքատների ու իր տղաների գլխին։ Նրանք հարցնում էին, թէ ի՞նչ է դա, իսկ նա էլ պատասխանում էր. «Օրհնութիւն է, որ ստացայ Աստծու սրբերից, առէ՛ք ու պահէ՛ք Տիրոջ երկիւղով»։ Եւ նրա Աթանաս որդին մեծանալով՝ Աստծու երկիւղը պահելով ու մօր աղօթքներով արժանացաւ վանահայր դառնալուն, իսկ յետոյ նրան կարգեցին այդ քաղաքի եպիսկոպոս[1]*։*

Հայր Բենեդիկտոսը, *ունենալով խստակենցաղ վարք, իրեն վանահայր ընտրելուց յետոյ վանականներից նոյնպէս խստութեամբ նոյն էր պահանջում։ Նրանք էլ, որ մինչ այդ սովորել էին փափուկ կեանքի, սկսեցին դժգոհել ու ափսոսալ, որ ընտրեցին նման վանահօր։ Մի օր, վանքի սովորութեան համաձայն, նրանք ապակէ անօթով լիքը գինի բերեցին, որ վանահայրն օրհնի, որից յետոյ պիտի ինքն էլ ըմպեր, բայց նենգութեամբ ու սատանայի դրդմամբ նախապէս թոյն խառնեցին այդ գինուն։ Աստծու սուրբը, ձեռքը երկարելով, Խաչի նշանը պատկերեց անօթի վրայ, որից այն այնպէս փշուր-փշուր եղաւ, որ կարծես նա Խաչի փոխարէն վրան մեծ քար էր գցել։ Մահ կրող անօթը չկարողացաւ տանել Կեանքի խորհուրդը կրող նշանը։ Ու նա, հասկանալով վանականների չար միտումը, ասաց խոնարհաբար. «Թող ամենակարող Աստուած ողորմի ձեզ, եղբայրնե՛ր, ինչ որ ուզում էիք ինձ անել։ Այժմ գնացէ՛ք եւ ձեզ համար ուրիշ վանահայր ընտրեցէ՛ք, որ ուզենայ ձեզ հաճոյանալ, որովհետեւ ես հեռանում եմ ձեզանից»*[2]*։*

---

1 **Պատրիարք Միքայէլ Ասորի**, «Ժամանակագրութիւն», տես նախորդ յղումը։

2 Նոյն տեղում։

Միայնակ մի հրեայ ճանապարհին հանգստանում էր անմարդաբնակ տեղում ու զարհուրելով երկնչում էր խաւարաշրջիկ դեւերից։ Ու մտածելով, որ քրիստոնեաներն իրենց խաչով կնքում եւ պահպանւում են, ինքն էլ իրեն խաչով տեառնագրելով՝ ննջում է։ Դեւերը գալով տեսնում եւ ճիչ բարձրացնելով ասում են. «Զարմանքի մէջ ընկանք, քանզի արքայական մատանիով կնքուած դատարկ անօթ տեսանք», ու չքւում են այնտեղից։ Իսկ հրեան, լսելով ու տեսնելով սուրբ խաչի զօրութիւնը, առաւօտեան ելնելով՝ պատմում է քաղաքի եպիսկոպոսին եւ մկրտւում նրանից[1]*։*

Ամանցիոս *անունով Աստծու խոնարհ մի ծառայ կար, որն աչքի էր ընկնում իր զարմանալի պարզամտութեամբ ու խոնարհութեամբ։ Նա առաքեալների նման ձեռքը դնում էր հիւանդների վրայ եւ բժշկում նրանց, եւ ինչքան էլ ծանր հիւանդ լինէին, միեւնոյն է, անմիջապէս բժշկւում էին նրա ձեռքի հպումից եւ աղօթքից։ Նրա մասին պատմում էին նաեւ, թէ ինչպէս նա, որտեղ թունաւոր օձ էր տեսնում, խաչի մի նշան անելով վրաները, սպանում էր դրանց։ Իսկ երբ օձը թաքնւում էր որեւէ քարանձաւում, նա խաչակնքում էր այդ տեղը, որից յետոյ հանում էին արդէն սատկած օձին*[2]*։*

1 http://armenianhouse.org/babajanyan/cross-am/1.html (առ 11/12/2023)։

2 Նոյն տեղում։

Ինչո՞ւ են հայերը խաչակնքուելիս սկզբում ձեռքը տանում ձախ, յետոյ՝ աջ ուսի կողմը, իսկ Ուղղափառ եկեղեցու հետեւորդները՝ հակառակը

Հայերը խաչակնքուելիս արտասանում են. «Յանուն Հօր» (աջ ձեռքը բարձրանում է դէպի ճակատը) «եւ Որդւոյ» (ձեռքն իջնում է կրծքավանդակ) «եւ Հոգւոյն» (ձեռքը գնում է ձախ ուսի կողմը) «Սրբոյ» (ձեռքը գնում է աջ ուսի կողմը), «Ամէն» (ձեռքը բաց ափով դնում ենք սրտին, քանզի սրտով ենք զգում, նաեւ սրտի զգայարանի միջոցով է ներգործում Սուրբ Հոգին): Ռուսներն ու միւս ուղղափառները խաչակնքուելիս արտասանում են՝ “Во имя Отца” *(«Յանուն Հօր», աջ ձեռքը բարձրանում է դէպի ճակատը)* “и Сына” *(«եւ Որդւոյ», ձեռքն իջնում է կրծքավանդակ)* “и Святого” *(«եւ Սրբոյ», ձեռքը գնում է աջ ուսի կողմը)* “Духа” *(«Հոգւոյն», ձեռքը գնում է ձախ ուսի կողմը), եւ յետոյ ասում են* “Аминь.” *(«Ամէն»):*

Եկեղեցու նախնի վարդապետներն ասում են, որ ձեռքի շարժումը ձախից աջ խորհրդանշում է մեղքից անցումը դէպի փրկութիւն, քանզի քրիստոնէութեան մէջ ձախ կողմը կապւում է սատայականի հետ, իսկ աջ կողմը՝ աստուածայինի: Ձախից աջ խաչակնքումը խորհրդանշում է աստուածայինի յաղթանակը սատայականի հանդէպ: Ձախից աջ խաչակնքումը, ըստ քրիստոնէական խորհրդաբանութեան, համարւում է մարդկանց կողմից տեառնագրումն առ Աստուած: Իսկ աջից ձախ խաչակնքումը համարւում է Աստծուց բխած օրհնութիւն առ մարդը: Պատահական չէ, որ եւ՛ առաքելական, եւ՛ կաթողիկէ, եւ՛ ուղղափառ եկեղեցիների քահանաները հաւատացեալներին խաչակնքում են ձախից աջ (իրենց կողմից), ինչը դիմացինի համար ընկալւում է որպէս

աջից ձախ խաչակնքում, այն է՝ Աստծու օրհնութիւնը։

Խաչակնքուելու տարբերութիւնը՝ աջից ձախ եւ ձախից աջ, աւանդական ու մշակութային առանձնայատկութիւն է։ Ուղղափառ եկեղեցիների հաւատացեալները խաչակնքուելիս ձեռքը տանում են հակառակ ուղղութեամբ՝ աջից ձախ։ Երբ արտասանում ենք «եւ Հոգւոյն Սրբոյ», «Հոգւոյն» բառի արտասանութեան ժամանակ ձեռքը հպում ենք ձախ ուսին։ Ռուս քրիստոնեաները խաչակնքուելիս ասում են «եւ Սրբոյ Հոգւոյն», այսինքն՝ «Հոգւոյն» բառը վերջում են արտասանում, դրա համար էլ ձեռքը վերջում են տանում դէպի ձախ ուսը։ Այնպէս որ, էական տարբերութիւն չկայ, քանի որ հայերը, կաթողիկները, ռուսները, յոյները եւ միւս ուղղափառները «Հոգւոյն» բառն ասելիս ձեռքը տանում են դէպի ձախ ուսը՝ սրտի կողմը, որը համարւում է «հոգու բնակարան»։ Այնպէս որ, էական տարբերութիւն չկայ, պարզապէս իւրաքանչիւր եկեղեցում խաչակնքւում են այնպէս, ինչպէս թելադրում է իրենց եկեղեցական աւանդութիւնը։

Ինչպէս ճիշդ խաչակնքուել

Հաւատացեալները խաչակնքում են ինչպէս առանձնական, այնպէս էլ ընդհանրական աստուածապաշտութեան ժամանակ՝ արտասանելով «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Եթէ խաչակնքումն այդքան զօրաւոր է, ապա ինչո՞ւ մենք չենք կարող մշտապէս վայելել Խաչի օրհնութիւնները: Պատասխանը շատ պարզ է. որովհետեւ ինչպէս հարկն է, չենք խաչակնքում: Գուցէ պատճառն այն է, որ մեր հաւատքը տկա՞ր է: Գուցէ այն պատճառով, որ խոնարհութի՞ւն չունենք: Եթէ խաչակնքուելով միշտ ստանանք մեր ուզածը, արդեօք վտանգ չկա՞յ ընկնելու հպարտութեան մէջ՝ աստուածային զօրութեան արդիւնքներն ընդունելով իբրեւ մեր սեփական ձեռքբերումները: Գուցէ խաչակնքուելու օրհնաբեր զօրութիւնը չե՞նք տեսնում մեր կարծրասիրտ լինելու, մեղաւորութեան եւ ապաշխարութեան բացակայութեան պատճառով: Մեր ձեռքերը պէտք է մեղքերից մաքուր եւ անաղարտ լինեն: Խաչակնքուելու ժամանակ չար ոգիներն այրւում ու փախչում են, բայց երբ տեսնում են, որ մեր ձեռքերն աղտոտուած են մեղքերով, նրանք չեն վախենում: Գուցէ մենք ճիշդ չե՞նք խաչակնքում՝ համաձայն այ՛ն աւանդութեան, որը Եկեղեցին է սովորեցնում մեզ: Գուցէ անարգո՞ւմ ենք Խաչի օրհնաբեր զօրութիւնը: Մենք մեղաւոր ենք անգիտակցաբար, անզգոյշ, մեքենայաբար եւ անփոյթ խաչակնքուելու համար: Ոմանք իրենց ձեռքը հապճէպ տեղափոխում են կրծքավանդակի վրայով կամ օդում՝ ընդհանրապէս չդիպչելով մարմնին: Ոմանք էլ կանգնում են աչքի ընկնող վայրերում եւ այնտեղ, բոլորի առաջ ցուցադրաբար, իրենց ձեռքերն անզուսպ երկարելով այս ու այն կողմ, խաչակնքում են անզգոյշ եւ

անխոհեմ, իսկ երբեմն էլ ծիծաղելի շարժումներ անելով՝ խեղաթիւրում են խաչի խորհուրդը։ Որոշ հայ քրիստոնեաներ էլ, ընդօրինակելով լատինամերիկեան աւանդութիւնը, խաչակնքուելու աւարտին համբուրում են բռունցքի մէջ ծալուած իրենց մատները։

*Նրանց մասին, ովքեր խաչակնքուելիս ձեռքն արագ թափահարում են օդում կամ կրծքի վրայ, սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է. «Դեւերն ուրախանում են այսպիսի խելայեղ թափահարութեամբ»[1]։ Խիստ, բայց ճշմարիտ է սբ. Յովհան Ոսկեբերանի այն խօսքը, թէ երբեմն սատանան ինքն է շարժում այս անուշադիր քրիստոնեաների ձեռքը՝ ծաղրելու սուրբ Խաչի ամենասուրբ խորհրդանիշը եւ անիծելու նրանց։ Քրիստոնեաների մի խումբ էլ լիովին խուսափում է հրապարակային խաչակնքուելուց։ Նրանք ամաչում են խոստովանել իրենց հաւատքը Քրիստոսի եւ Նրա Խաչի հանդէպ։ Նրանք վախենում են աշխարհի մարդկանց հեգնանքից, արհամարհանքից ու ծաղրից։ Ինչպէս գրում է սբ. Յովհաննէս Աւետարանիչը նրանք «**մարդկանցից տրուած փառքը աւելի սիրեցին, քան Աստծուց տրուած փառքը**» (Յովհ. 12, 43)։ Եթէ մենք պատկանում ենք նրանց, եկէք յիշենք Պօղոս առաքեալի ցուցումները. «**Եւ այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանուէք**» (Հռոմ. 12, 2), ինչպէս նաեւ յիշենք Տէր Յիսուսի լուրջ նախազգուշացումը. «**Ով որ ինձ կը խոստովանի մարդկանց առաջ, ես էլ կը խոստովանեմ նրան իմ Հօր առաջ, որ երկնքում է։ Եւ ով ինձ կ՚ուրանայ մարդկանց առաջ, ես էլ նրան կ՚ուրանամ իմ Հօր առաջ, որ երկնքում է**» (Մատթ. 10, 32-33)։*

Զգո՛յշ լինենք ու յիշենք, թէ ինչ խորհուրդ է մեզ տալիս սբ. Կիւրեղ Երուսաղէմացին. «Եկէք չամաչենք Քրիստոսի

1 https://vladimir-ekb.ru/qa/ak-pravilno-krestitsya/ (աս 11/11/2023):

խաչի համար, բայց եթէ ուրիշն ամաչի եւ թաքցնի այն, դու տեսանելի կերպով կնքի՛ր այն քո ճակատին, որպէսզի դեւերը տեսնեն արքայական նշանը եւ դողալով հեռու փախչեն: Ուրեմն, յաճախ խաչակնքուեցէ՛ք՝ուտելիս եւ խմելիս, նստելիս, պառկելու, վեր կենալիս, խօսելիս եւ քայլելիս, մի խօսքով՝ ամէն գործի ժամանակ: Ով խաչակնքում է այստեղ՝ երկրի վրայ, նա տեսանելիօրէն երկնքում է... Պաշտպանութիւնը մեծ է: Դա հաւատարիմների նշանն է եւ դեւերի սարսափը»[1]:

Ինչպէ՞ս ճիշդ խաչակնքուել, եւ ինչպէ՞ս կարող է խաչի նշանը պաշտպանութիւն դառնալ նաեւ մեզ համար: Ինչպէ՞ս կարող է այն դառնալ դեւերի սարսափը մեր ձեռքերում: Իհարկէ, եթէ դա ճիշդ կատարենք այնպէս, ինչպէս մեզ սովորեցնում է մեր Եկեղեցին, այսինքն՝ հաւատքով, բարեպաշտութեամբ, գիտակցութեամբ, խոնարհաբար եւ խոհեմութեամբ: Խաչակնքումը պիտի չդառնայ ձեւական ու մեքենայական որեւէ շարժում: Ամէն անգամ խաչակնքուելիս պէտք է անդրադառնանք այն մեծ ինքնազոհողութեանը, որ Աստուած իրականացրեց խաչի վրայ մեր փրկութեան համար: Խաչակնքուելիս յիշում ենք Տէր Յիսուսի զոհողութեան՝ սիրոյ, ողորմածութեան եւ մեր մէջ Սուրբ Հոգու ներկայութեան մասին: Խաչակնքումն Աստծու հանդէպ մեր հաւատքի եւ յոյսի տեսանելի արտայայտութիւնն է: Ուստի, այն շատ կարեւոր է եւ չի կարող սովորական շարժուձեւի վերածուել: Խաչակնքումը, որը կատարւում է ճիշդ եւ հանդարտ, հաւատքով եւ ակնածանքով, սարսափեցնում է դեւերին, զսպում մեղաւոր կրքերը եւ ներգրաւում աստուածային շնորհը:

Ճիշդ խաչակնքուելու համար, ինչպէս նախորդիւ նշել ենք, միացնում ենք աջ ձեռքի առաջին երեք մատները (միւս երկու մատները միացուած ծալում ենք ափի մէջ)՝ հպելով

1 https://www.newadvent.org/fathers/310104.htm (առ 11/11/2023):

ճակատին եւ արտասանելով «Յանուն Հօր», յետոյ միացեալ երեք մատներն իջեցնում ենք կրծքից քիչ վար՝ արտասանելով «եւ Որդւոյ», յետոյ նոյն երեք մատները տանում ենք ձախ ուսի կողմը, արտասանելով «եւ Հոգւոյն», ապա կրծքի աջ ուսի կողմը տանելով՝ արտասանելով «Սրբոյ»։ Վերջում բացուած ձեռքը դնում ենք սրտի վրայ՝ ասելով «Ամէն», որը եբրայերէնից թարգմանաբար նշանակում է «ճշմարիտ է», «թող լինի»։

ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

ԻՆՉՈՐ ԵՆՔ ԽԱՉԱԿՆՔՈՒՄ

Էջադրումը, շարուածքը եւ կազմի ձեւաւորումը՝
Գէորգ սրկ. Գէորգեանի
Խմբագրեց եւ սրբագրեց Ե. Խաչատրեանը
Տպաքանակը՝ 300
Չափսը՝ 60x84 1/16

Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում:

ԵՐԵՒԱՆ 2024